



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ

2019

Նախաբան

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախաձեռնությամբ և «Հայաստանում ընտրական գործընթացների աջակցություն» (ՀԸԳԱ) UNDP ու ՀԸԳԱ-2 ծրագրերի աջակցությամբ ստեղծվել է առցանց ուսումնական հարթակ՝ <https://elearning.elections.am> Հարթակը նախատեսված է ընտրական գործընթացի մասնակիցների ուսուցումը և վերապատրաստումը դյուրացնելու, շարունակական կրթություն ապահովելու, ինչպես նաև անհատական կարիքներին համահունչ ինքնակրթվելու նպատակով:

Հարթակի հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ ուսումնական նյութերն ու դասընթացները նախատեսված են՝ համապատասխան գործառնություններ իրականացնող խմբերի, մասնագետների և բոլոր հետաքրքրված այն քաղաքացիների համար, որոնց համար հարթակը միջոց է՝ առանց ավելորդ խոչընդոտների և դժվարությունների ընդգրկվելու իրենց հետաքրքրող ընտրական որևէ գործընթացում:

Հարթակը, ըստ ընտրական գործընթացների հերթականության սկզբունքով՝ պարզ, մատչելի և փոխգործուն ուսումնական նյութերի միջոցով իրականացնում է առցանց ուսուցում, հետևյալ բաժիններով.

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի որակավորում
- Տեխնիկական սարքավորում սպասարկող մասնագետների ուսուցում
- Ընտրողների իրազեկում

Հարթակն առաջիկայում կներառի <<Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների կազմակերպչական հմտությունների զարգացումը>> բաժնի՝ առցանց ուսուցման ուսումնական նյութերի ամբողջական փաթեթը: Այն կարևոր աջակցություն կլինի ընտրական գործընթացի շահառուների համար:

Ապագայում հանձնաժողովի նախագահների և քարտուղարների համար կստեղծվի պարտադիր ուսումնական մաս, ինչպես նաև կլինի հարթակ՝ հանձնաժողովի անդամների կազմակերպչական հմտությունները բարձրացնելու համար:

Հաշվի առնելով հանձնաժողովի աշխատանքներում մշտական խնդիրները՝ կարևորել է այս բաժնի ներառումը՝ կոնֆլիկտների կառավարման և բանակցություններ վարելու հմտություններն ու կարողությունները զարգացնելու նպատակով:

Հայաստանի Հանրապետությունում անցկացվում են՝

Համապետական՝ Ազգային ժողովի ընտրությունները.

ՏԻՄ ընտրություններ՝



Համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրություններ.

Երևանի ավագանու ընտրություններ.

Գյումրու ավագանու ընտրություններ.

Վանաձորի ավագանու ընտրություններ:

Հանրաքվե, տեղական հանրաքվե

Ընտրելու իրավունքը _____

Հայաստանի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեն՝



Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն ընտրության օրը (քվեարկության օրը) 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետով հաշվառում ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք:

Նույն անձը կարող է ընդգրկվել միայն մեկ համայնքի ընտրողների ցուցակում և միայն մեկ անգամ:

⇒ **Ընտրելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կադավրված ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պադիժը կրող անձինք:**

Ընտրողների ցուցակներ կազմելը և վարելը _____

Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարում և ընտրողների ցուցակը կազմում է բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին):

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակներ կազմում են նաև քրեակատարողական հիմնարկների պետերը, ձերբակալվածներին պահելու վայրերի ղեկավարները և զորամասերի հրամանատարները:

Ընտրողների լրացուցիչ ցուցակներ

Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակ, որում ընդգրկվում են՝

- ✓ քվեարկության օրը դատական ակտ ներկայացրած ընտրողները,
- ✓ համապատասխան ընտրական տեղամասի նկարագրում ընդգրկված հասցեում հաշվառված, սակայն ընտրական տեղամասի ընտրողների ցուցակից դուրս մնացած ընտրողները՝ լիազոր մարմնի տեղեկանքի հիման վրա:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակներ՝

- ✓ **Ստացիոնար բուժհաստատության ընտրողների լրացուցիչ ցուցակ**, որում ընդգրկվում են ստացիոնար բուժման մեջ գտնվող և տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող քվեարկությանը մասնակցել ցանկացող ընտրողները,
- ✓ **Ձերբակալված անձանց պահելու վայրի ընտրողների լրացուցիչ ցուցակ**, որում ընդգրկվում են ձերբակալված անձանց պահելու վայրում գտնվող ընտրողները:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տեղամասի ընտրողների ցուցակում համարակալման շարունակականությամբ ըստ առանձին բաժինների ներառվում են նաև՝

- ըստ գտնվելու վայրի ընտրողների ցուցակը.
- հաշվառում չունեցող ընտրողների ցուցակը.
- ընտրական տեղամասեր գործուղվող ոստիկանության ծառայողների ցուցակը.



Ընտրողների ցուցակները լիազոր մարմնի կողմից կազմվում են նաև **էլեկտրոնային եղանակով**, հատուկ ծրագրային ապահովմամբ: Էլեկտրոնային ցուցակները սահմանված ձևաչափով և կարգով նախապես ներբեռնվում են համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորման մեջ:

Էլեկտրոնային եղանակով չեն կազմվում և տեղամասային ընտրական հանձնաժողովներին տրամադրվող տեխնիկական սարքավորման մեջ չեն ներբեռնվում՝

- ✗ գորամասերում կազմվող ընտրողների ցուցակները.
- ✗ քրեակատարողական հիմնարկներում կազմվող ընտրողների ցուցակները.
- ✗ ձերբակալված անձանց պահելու վայրերում կազմվող ընտրողների ցուցակները.
- ✗ ստացիոնար բուժման մեջ գտնվող ընտրողների լրացուցիչ ցուցակները:

Նախընտրական քարոզչություն

Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների, ինչպես նաև տպագիր մամուլի, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (այդ թվում՝ արբանյակային հեռարձակման ժամանակ) միջոցով **արգելվում է:**



Ընտրական հանձնաժողովի անդամներին արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ փարածել:

Ընտրական հանձնաժողովների համակարգը

Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորվում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝

Կենտրոնական ընտրական հանձնաժողով,

տարածքային ընտրական հանձնաժողովներ,

տեղամասային ընտրական հանձնաժողովներ:

Ընտրական հանձնաժողովներն իրենց լիազորություններն իրականացնելիս անկախ են: Նրանց գործունեությանը որևէ միջամտություն արգելվում է:

Ընտրական հանձնաժողովներն իրենց լիազորություններն իրականացնում են օրինականության, կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

Ընտրական հանձնաժողովներն ապահովում են ընտրողների ընտրական իրավունքի իրականացումը և պաշտպանությունը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներ կազմավորելու հիմունքները և կարգը

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող և ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական ունեցող անձինք:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և քարտուղարի համար կարող է սահմանել որակավորման ավելի բարձր չափանիշներ, քան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների համար:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ չեն կարող լինել

- ✗ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-154.6-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների, ինչպես նաև դիտավորությամբ կատարված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների համար դատվածություն ունեցող անձինք.
- ✗ Ազգային ժողովի պատգամավորները, նախարարները և նրանց տեղակալները, համայնքների ղեկավարները, մարզպետները և նրանց տեղակալները, դատավորները, դատախազները, քննչական մարմիններում ծառայողները, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատական ակտերի հարկադիր կատարման, քրեակատարողական, պրոբացիայի, փրկարար ծառայություններում ծառայողները, զինծառայողները, վստահված անձինք, ընտրություններին մասնակցող կուսակցության, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուի լիազոր ներկայացուցիչները, դիտորդները, թեկնածուները:

Տեղամասային ընտրական հանձնաժողովն ունի առնվազն 7 անդամ: Տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամ նշանակում են՝

- ✓ **Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները)**՝ մեկական անդամ, եթե խմբակցությունների թիվը մեծ է 4-ից, և երկուական անդամ, եթե խմբակցությունների թիվը փոքր է 5-ից.
- ✓ **համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովը**՝ 2 անդամ:

Հերթական ընտրությունների ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու մասին հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվում քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն, իսկ արտահերթ ընտրությունների ժամանակ՝ քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 20, և ոչ ուշ, քան 18 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար նշանակվում են համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունները _____

Տեղամասային ընտրական հանձնաժողովը՝

- ✓ կազմակերպում է քվեարկությունը, ամփոփում քվեարկության արդյունքներն ընտրական տեղամասում.
- ✓ կազմում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն.
- ✓ հանձնաժողովի կնիքը, գրանցամատյանը, քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության 2 օրինակը, տեխնիկական սարքավորումները, ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը (այսուհետ՝ պարկ) և քվեատուփը ներկայացնում է տարածքային ընտրական հանձնաժողով:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունները դադարում են ընտրության ավարտից հետո՝ **ընտրության արդյունքները ամփոփվելուց 7 օր հետո**, բացառությամբ Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլ անցկացվելու դեպքի:

Ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկվելու դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունները դադարում են **դատական ակտի հրապարակման օրվա հաջորդ օրը:**



Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների

կարգավիճակը _____

Հանձնաժողովի անդամն իրավունք ունի՝

- ✓ նախապես ծանոթանալու Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող հարցերին և փաստաթղթերին.
- ✓ ելույթ ունենալու Հանձնաժողովի նիստում.
- ✓ ներկայացնելու առաջարկություններ, առարկություններ և պահանջելու, որ այդ հարցով անցկացվի քվեարկություն.
- ✓ նիստի մասնակիցներին տալու հարցեր, ստանալու պատասխաններ.
- ✓ հայտնելու քվեարկության նախապատրաստման, կազմակերպման և անցկացման վերաբերյալ իր կարծիքը.
- ✓ պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում, եթե գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում.
- ✓ իրականացնելու ընտրական օրենսգրքով սահմանված այլ լիազորություններ:

Հանձնաժողովի անդամը պարտավոր է՝

- ✓ կատարել Հանձնաժողովի նախագահի՝ իր իրավասության սահմաններում տված հանձնարարությունները.
- ✓ մասնակցել Հանձնաժողովի աշխատանքներին և կատարել իր լիազորությունները.

- ✓ մասնակցել ընտրական հանձնաժողովի անդամների համար կազմակերպվող մասնագիտական դասընթացներին.
- ✓ մասնակցել Հանձնաժողովի նիստերին և քվեարկությանը.
- ✓ կրել ընտրական օրենսգրքով սահմանված այլ պարտականություններ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին ընտրությունների ժամանակահատվածում, ինչպես նաև Ազգային ժողովի ընտրությունների երկրորդ փուլ անցկացվելու դեպքում վարձատրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի կրկնապատիկի, հանձնաժողովի քարտուղարը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի վարձատրության 70 տոկոսի, իսկ հանձնաժողովի անդամները՝ նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափով:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները վարձատրվում են ընտրությունների արդյունքներն ամփոփելուց հետո:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, հանձնաժողովի քարտուղարին կամ անդամին վարձատրություն չի տրվում, եթե նա չի ստորագրել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունը, կամ եթե նրա լիազորությունները վաղաժամկետ դադարել են:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են՝

- ✓ եթե նա չունի ընտրական հանձնաժողովում նշանակվելու իրավունք.
- ✓ եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, քարտուղարը կամ հանձնաժողովի անդամը ներկայացրել է այդ պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում:
- ✓ եթե զորակոչվել է.
- ✓ եթե դատապարտվել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-154.6-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների կամ դիտավորությամբ կատարված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների համար, կամ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը կամ որպես պատիժ կիրառվել է կալանք կամ ազատազրկում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, քարտուղարը կամ հանձնաժողովի անդամը պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում կարող է ներկայացնել մինչև քվեարկության օրվան նախորդող 5-րդ օրվա ժամը 18.00-ն՝ տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին:

- ! Ինքնաբացարկի մասին դիմումը դիմումատուն ներկայացնում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին.
- ! այդ մասին անհապաղ տեղեկացնում իրեն նշանակողին.
- ! դիմումը պետք է պարունակի դիմումատուի ազգանունը, անունը, հայրանունը, տեղամասային ընտրական հանձնաժողովի համարը, դիմում ներկայացնելու օրը, ամիսը, տարեթիվը և ժամը:
- ! դիմումը պետք է ստորագրած լինի դիմումատուի կողմից:

Առանձին ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու կամ այդ ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակվելու դեպքում այդ տեղամասային ընտրական

հանձնաժողովի անդամների լիազորությունները համարվում են վաղաժամկետ դադարած, և նրանք չեն կարող ընդգրկվել վերաքվեարկություն անցկացնող տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերում:

Հանձնաժողովի նախագահի և քարտուղարի պաշտոնանկության կարգը

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ **կարող են պաշտոնանկ արվել միայն, եթե քվեարկության նախորդ օրը կամ քվեարկության օրը ցուցաբերում են ակնհայտ անգործություն**, որի հետևանքով կարող է վտանգվել քվեարկության նախապատրաստումը կամ քվեարկության բնականոն ընթացքը կամ քվեարկության արդյունքների ամփոփումը:

Այդ դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ կամ քարտուղար նշանակում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմից:

Տարածքային ընտրական հանձնաժողովը կարող է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ վաղաժամկետ դադարեցնել տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները, եթե հանձնաժողովի անդամը կոպտորեն խախտել է ընտրական օրենսգրքի դրույթները (բացառությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի հերթական նիստերից անհարգելի բացակայության դեպքի):



Տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումը _____

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամն հանձնաժողովում գործում է անկախ և չի ներկայացնում իրեն նշանակողին:

Հանձնաժողովի առաջին նիստը տեղամասային կենտրոնում հրավիրվում է Հանձնաժողովի կազմավորման օրվանից հետո՝ 3-րդ օրը, ժամը 12.00-ին:

➡ **Առաջին նիստում** հանձնաժողովի անդամները ստորագրում են տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի իրավունքների և պարտականությունների ծանոթացման տեքստը:

➡ **Քվեարկության նախորդ օրվա նիստում** Հանձնաժողովը վիճակահանությամբ բաշխում է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքները:

➡ **Քվեարկության օրը Հանձնաժողովն անցկացնում է երկու նիստ՝**

➡ **Ժամը 7.00-ին՝** վիճակահանությամբ որոշում է ընտրողներին գրանցող, քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող, ինքնաստանձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամներին, Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ նաև շրջիկ արկղի միջոցով քվեարկություն անցկացնող առնվազն մեկ անդամին և տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների՝ 2 ժամը մեկ պարբերականությամբ գործառույթների հերթափոխը:

➡ **քվեարկության ավարտից ժամը 20.00-ից հետո՝** սկսում է տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփումը:

Հանձնաժողովի նիստում քննարկումների կազմակերպման, որոշումների ընդունման և արձանագրությունների կազմման կարգը

Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է Հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Նիստը վարում է Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա հանձնարարության կամ բացակայության դեպքում՝ Հանձնաժողովի քարտուղարը:

Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են Հանձնաժողովի իրավազոր նիստում՝ բաց քվեարկությամբ: **Հանձնաժողովի անդամը քվեարկում է անձամբ՝ կողմ կամ դեմ:**

Որոշումն ընդունվում է, եթե կողմ է քվեարկել նիստին ներկա հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին, բացառությամբ ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերի:

Քվեարկության ավարտից հետո՝ մինչև ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություն կազմելը, Հանձնաժողովի նիստը չի կարող ընդհատվել:



Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև քվեարկության ամբողջ ընթացքում տեղամասային կենտրոնում և քվեարկության արդյունքներն ամփոփելու ընթացքում քվեարկության սենյակում կարող են ներկա գտնվել՝

- ! Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների անդամները՝ համապատասխան հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ.
- ! Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի մինչև 2 վստահված անձ.
- ! համայնքի ղեկավարի և ավագանու անդամի յուրաքանչյուր թեկնածուի մեկ վստահված անձ և Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության 1 վստահված անձ.
- ! յուրաքանչյուր զանգվածային լրատվության միջոցը ներկայացնող 1 լրագրող և 1 լուսանկարիչ կամ տեսաձայնագրման 1 օպերատոր.
- ! յուրաքանչյուր միջազգային կազմակերպությունից մինչև 2 դիտորդ՝ թարգմանչի ուղեկցությամբ.
- ! տեղական դիտորդների դեպքում՝ յուրաքանչյուր կազմակերպությունից՝ 1 դիտորդ.
- ! Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների և այլ պետությունների ընտրական մարմինների ներկայացուցիչները՝ այցելուի կարգավիճակով.
- ! թեկնածուն՝ միայն տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստին:

ՈՒ Շ Ա Դ Ը ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ընտրական հանձնաժողովների նիստերը, այդ թվում՝ տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստը, ինչպես նաև քվեարկության ընթացքը վստահված անձինք, դիտորդները, այցելուները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են **! լուսանկարել, տեսանկարահանել՝ չխախտելով ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը:**

ՈՒ Շ Ա Դ Ը ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հանձնաժողովի անդամները, վստահված անձինք, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, դիտորդները, այցելուները վերնազգեստի վրա պարտադիր կարգով **! տեսանելի ձևով պետք է կրեն նիստում ներկա գտնվելու իրավունքը հավաստող վկայական:**



Վստահված անձինք, դիպորդներ, այցելուներ և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ

Վստահված անձինք ներկայացնում են թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների շահերը:

Վստահված անձն իրավունք ունի՝

- ⇒ խորհրդակցական ծայնի իրավունքով մասնակցելու հանձնաժողովի նիստերին, քվեարկության ընթացքում ներկա գտնվելու քվեարկության սենյակում.
- ⇒ ծանոթանալու Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, տարածքային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին և ինքնուրույն կատարելու քաղվածքներ, ստանալու պատճեններ այն փաստաթղթերից, որոնք տեղադրված չեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում.
- ⇒ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, ծանոթանալու.
 - ✎ տեղամասային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին (բացառությամբ քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների),
 - ✎ դատարանի համապատասխան վճիռներին, ընտրողին տրամադրած լիազոր մարմնի համապատասխան տեղեկանքին,
 - ✎ ինչպես նաև քվեարկված քվեաթերթիկներին և դրանցում կատարված նշումներին,
- ⇒ չմիջամտելով ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և չխաթարելով քվեարկության ընթացքն ինքնուրույն կատարելու քաղվածքներ ընտրական փաստաթղթերից (բացառությամբ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների, քվեարկության կտրոնների)՝ քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ ինքնուրույն կատարելու քաղվածքներ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից.
- ⇒ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և դեպքերում բողոքարկելու ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները, անգործությունը.
- ⇒ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հետևելու քվեաթերթիկների և ինքնաստանձվող դրոշմանիշերի տպագրման, փոխադրման, պահպանման և հաշվարկման գործընթացներին.
- ⇒ չմիջամտելով հանձնաժողովի անդամի և տեխնիկական սարքավորումը սպասարկող անձի (այսուհետ՝ մասնագետ) աշխատանքներին՝ ներկա գտնվելու հանձնաժողովի՝ ընտրողների նույնականացումն իրականացնող, քվեաթերթիկ և քվեարկության ծրար հատկացնող անդամների և մասնագետի, քվեատուփը հսկող անդամի կողքին և հետևելու նրանց աշխատանքներին.
- ⇒ ընտրական հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ հանձնաժողովի նախագահին ներկայացնելու դիտարկումներ և առաջարկություններ.
- ⇒ պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում, եթե գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում.
- ⇒ ընտրական տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ այլ փաստաթղթերի հետ ծանոթանալու քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներին, ինքնուրույն կատարելու քաղվածքներ՝ առանց դրանք լուսապատճենահանելու, լուսանկարելու և տեսանկարահանելու իրավունքի.
- ⇒ լուսանկարել, տեսանկարահանել վերահաշվարկի աշխատանքները.
- ⇒ իրականացնելու ընտրական օրենսգրքով իրեն վերապահված այլ իրավունքներ:

Դիտորդները ներկայացնում են միջազգային կազմակերպություններ, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հասարակական կազմակերպություններ:



Այցելուներ են՝ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների ներկայացուցիչները, ինչպես նաև այլ պետությունների ընտրական մարմինների ներկայացուցիչները



Դիտորդը, այցելուն, ՋԼՄ ներկայացուցիչն իրավունք ունեն՝

- ⇒ ներկա գտնվելու ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում:
- ⇒ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հետևելու քվեաթերթիկների և ինքնաստանձվող դրոշմանիշերի տպագրման, փոխադրման, պահպանման և հաշվարկման գործընթացներին.
- ⇒ ծանոթանալու Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, տարածքային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին և ինքնուրույն կատարելու քաղվածքներ, ստանալու պատճեններ այն փաստաթղթերից, որոնք տեղադրված չեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում.
- ⇒ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը ծանոթանալու.
 - ✎ տեղամասային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին (բացառությամբ քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների),
 - ✎ դատարանի համապատասխան վճիռներին, ընտրողին տրամադրած լիազոր մարմնի համապատասխան տեղեկանքին,
 - ✎ Չմիջամտելով ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և չխաթարելով քվեարկության ընթացքը՝ ինքնուրույն կատարելու քաղվածքներ ընտրական փաստաթղթերից (բացառությամբ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների, քվեարկության կտրոնների).
- ⇒ ազատ տեղաշարժվելու քվեարկության սենյակում՝ քվեաթերթիկների, քվեարկության ծրարների, ընտրողների ցուցակների ու քվեատուփի դիտարկման համար.
- ⇒ հրապարակայնորեն, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով հայտնելու կարծիք, անելու հայտարարություն՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման վերաբերյալ.
- ⇒ լուսանկարել, տեսանկարահանել վերահաշվարկի աշխատանքները.
- ⇒ օգտվելու ընտրական օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներից:



Ուշադրություն

Դիտորդն իրավունք ունի պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում, եթե գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում.

Դիտորդը, այցելուն, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչն իրավունք չունեն՝



- ✗ միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին.
- ✗ միջամտելու քվեարկության ընթացքին.
- ✗ իրականացնելու քարոզչություն.
- ✗ ընտրական հանձնաժողովի անդամներին տալու ցուցումներ, ներկայացնելու պահանջներ:

Ուշադրություն

❗ Դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, այցելուն պարտավոր են գրանցվել ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում ընտրական հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև քվեարկության ընթացքում՝ քվեարկության սենյակում ներկա գտնվելու համար:

Դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, այցելուն պարտավոր են ընտրական հանձնաժողովում, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում ներկա գտնվելու համար պարտադիր կարգով տեսանելի ձևով կրել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տրված սահմանված նմուշի վկայականը:

Ուշադրություն

❗ Դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, այցելուի՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում: Ոչ ոք (այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները) իրավունք չունի (իրավունք չունեն) դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին, այցելուին դուրս հանելու տեղամասային կենտրոնից կամ որևէ այլ կերպ նրանց մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա գտնվելուց, **բացառությամբ**

Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքի՝

Դիտորդի կողմից որևէ թեկնածուի, ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության աջակցելու, ինչպես նաև ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքում, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը:

Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքի՝

Զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի կողմից ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքում, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը:

Ընտրական օրենսգրքի 65-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքի՝

Եթե քվեարկության սենյակում գտնվող դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարում է քվեարկության բնականոն ընթացքը, ապա

- ✓ ապա Հանձնաժողովն իրավասու է հանձնաժողովի **անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ** սահմանելու քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը: Որոշումը պետք է համապատասխանի համաչափության սկզբունքին, և ամեն դեպքում **այդ որոշմամբ սահմանված թիվը չի կարող նվազ լինել 15-ից**:

Եթե քվեարկության սենյակում, արդեն իսկ ներկա են առավելագույն թվով դիտորդներ և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, ապա Հանձնաժողովի նախագահն իրավասու է արգելել նոր դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների մուտքը քվեարկության սենյակ: Սույն գործառույթի կատարումն ապահովելու անհնարինության դեպքում Հանձնաժողովի նախագահի պահանջով այն իրականացվում է ոստիկանության օժանդակությամբ:

Այդ սահմանափակումը չի տարածվում այցելուների, միջազգային դիտորդների և վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստառադիոընկերությունների ներկայացուցիչների վրա:

Ուշադրություն

! Հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ սահմանված կանոնակարգը խախտելու, ինչպես նաև Հանձնաժողովի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքերում՝ վստահված անձի, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցչի, դիտորդի նկատմամբ **կիրառվում է նախազգուշացում**:

Նախազգուշացումից հետո, եթե վստահված անձի, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցչի, դիտորդի կողմից Օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքում, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը վստահված անձը, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցչը, դիտորդը հեռացվում են Հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ քվեարկության սենյակից և տեղամասային կենտրոնից:

Դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին, վստահված անձին Հանձնաժողովի նիստից և տեղամասային կենտրոնից հեռացնելու որոշումն ընդունվում է Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ծայնների առնվազն 2/3-ով:

Քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը սահմանվելու, ինչպես նաև դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին, վստահված անձին նախազգուշացնելու, Հանձնաժողովի նիստից և տեղամասային կենտրոնից հեռացնելու մասին Հանձնաժողովի գրանցամատյանում գրառվում է Հանձնաժողովի որոշում՝ նշելով պատճառը:

Ընտրական փաստաթղթեր և քվեարկության անցկացման համար անհրաժեշտ նյութեր

Տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվում է՝

- ⇒ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը,
 - ⇒ ԿԸՀ-ի որոշումները,
 - ⇒ համարակալված էջերով և տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից կնքված գրանցամատյանը,
 - ⇒ տեղամասային կենտրոնի ցուցանակը /եթե այդպիսին նախօրոք չի ստացվել/,
 - ⇒ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների վկայականները,
 - ⇒ քվեախցիկ՝ յուրաքանչյուր 750 ընտրողի հաշվով առնվազն մեկ հատ,
 - ⇒ չօգտագործված քվեաթերթիկների արկղ՝ քվեախցիկում տեղադրելու համար
 - ⇒ քվեատուփ կամ քվեատուփեր՝ միաժամանակ մի քանի ընտրություն անցկացվելու դեպքում,
- Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ շրջիկ արկղ, եթե տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկություն է կազմակերպելու ստացիոնար բժշկական հաստատությունում կամ ձերբակալված անձանց պահելու վայրում:

Քվեարկության օրվանից 3 օր առաջ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը.

Լիազոր մարմնից ստանում է՝

- ✓ տեղամասային կենտրոնում փակցվող ընտրողների ցուցակները.
- ✓ տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից գործաձվող ընտրողների ցուցակները՝ կազմված մատյանի ձևով.
- ✓ ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները.
- ✓ քվեարկության օրն ընտրական տեղամասում ընտրողների լրացուցիչ ցուցակ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ, եթե առկա է ստանում է նաև՝

- ✓ ստացիոնար բուժհաստատության ընտրողների լրացուցիչ ցուցակ:

Ուշադրություն

! Ընտրողների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը, **քվեարկության օրվանից 2 օր առաջ** տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը փակցնում է տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը **տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահից ստանում է՝** զինվորական մասում հաշվառված ընտրողների ցուցակը, որը բացվում է միայն քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովում:

Ձերբակալված անձանց պահելու վայրի ընտրողների ցուցակը ձերբակալված անձանց պահելու վայրի ղեկավարը քվեարկության օրը կազմում և հանձնում է ձերբակալված անձանց պահելու վայրում շրջիկ արկղի միջոցով քվեարկություն կազմակերպող տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամին՝ ձերբակալված անձանց պահելու վայրում՝ շրջիկ արկղի միջոցով քվեարկությունը սկսելուց առաջ:

Քրեակադրողական հիմնարկներում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քրեակատարողական հիմնարկում քվեարկող ընտրողների ցուցակը ստանում է այդ հիմնարկի պետից քվեարկության օրվանից 2 օր առաջ:

Քվեարկության նախորդ օրը տեղամասային ընտրական հանձնաժողովը տարածքային ընտրական հանձնաժողովից ստանում է՝

- ⇒ քվեաթերթիկները (ընտրական տեղամասում ընտրողների թվի մինչև 5 տոկոս ավելի քանակով, բայց ոչ պակաս, քան ընտրողների թվից 10-ով ավելին).
- ⇒ քվեարկության ծրարները (ընտրական տեղամասում ընտրողների թվի մինչև 5 տոկոս ավելի քանակով, բայց ոչ պակաս, քան ընտրողների թվից 10-ով ավելին).
- ⇒ տվյալ ընտրական տեղամասի համար տպագրված ինքնաստանձվող դրոշմանիշերի ամբողջ տպաքանակը.
- ⇒ համարակալված կտրոնները.
- ⇒ տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը.
- ⇒ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքները.
- ⇒ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած քանակով տեխնիկական սարքավորումները (ներբեռնված ընտրողների էլեկտրոնային ցուցակներով).
- ⇒ քվեաթերթիկների նմուշներ՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար,
 - ⇒ քվեարկության սենյակում կամ դրա մուտքի մոտ փակցնելու համար ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները: Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համապետական և տվյալ տարածքի տարածքային ընտրական ցուցակները:
- ⇒ քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները /յուրաքանչյուր ընտրությունների համար առնվազն 4-ական օրինակներ/,
- ⇒ քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածքի ձևաթղթերը.
- ⇒ ծրարներ ընտրական փաստաթղթերը փաթեթավորելու համար.
- ⇒ տեսակավորված և փաթեթավորված ընտրական փաստաթղթերը հավաքելու համար մեկանգամյա օգտագործման պարկ /միաժամանակ մի քանի ընտրություն անցկացվելու դեպքում՝ յուրաքանչյուր քվեարկության ընտրական փաստաթղթերի համար մեկ պարկ/:

ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Քվեարկության սենյակի կահավորման համար պարասխանադրու է համապարասխան համայնքի ղեկավարը: Քվեարկության սենյակի կահավորումը պետք է ավարտվի **քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն:**

Քվեարկության խցիկները տեղադրվում են միմյանցից առնվազն 1 մետր հեռավորությամբ և այն դիրքով, որ ընտրողը քվեարկելիս լինի հանձնաժողովին դեմքով և թիկունքով դեպի պատը:

Քվեարկության խցիկները տեղադրվում են նաև չօգտագործված քվեաթերթիկների արկղ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունները քվեարկության նախորդ օրը՝

☞ տեղամասային ընտրական հանձնաժողովն իր նիստում վիճակահանությամբ բաշխում է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքները:

Վիճակահանություններին մասնակցում են ՏՀՀ-ի բոլոր անդամները՝ այդ թվում

հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

Վիճակահանության արդյունքներն արձանագրվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

☞ տեղամասային ընտրական հանձնաժողովը հաշվում է ստացված քվեաթերթիկները և առանձնացնելով հարյուրական քվեաթերթիկ դասավորում,

☞ հաշվում է նաև քվեարկության ծրարները և առանձնացնելով հարյուրական ծրար՝ կապում:

Քվեաթերթիկների և քվեարկության ծրարների հարյուրական կապերը, ինքնաստսնձվող դրոշմանիշերը, համարակալված կտրոնները, ընտրողների ցուցակները, ընտրողների լրացուցիչ ցուցակները, տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը, հանձնաժողովի անդամների անհատական կնիքները տեղադրում է ընտրական փաստաթղթերի պահպանման համար նախատեսված չիրկիզվող պահարանում:

Պահարանը փակվում և փակման մասը թղթով սոսնձվում է: Սոսնձված թղթի վրա ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը. հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք ևս կարող են ստորագրել սոսնձված թղթի վրա:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության սենյակը, պահարանը հանձնում է պահպանման ոստիկանության ծառայողներին, որի մասին գրանցամատյանում կազմվում արձանագրություն:



Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունները քվեարկության օրը _____

Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը տեղամասային կենտրոնում սկսվում է ժամը 7.00-ին:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ստուգելով պահարանին սոսնձված թղթի ամբողջականությունը ոստիկանության ծառայողներից ընդունում է չիրկիզվող պահարանը, որի մասին գրանցամատյանում կազմվում է արձանագրություն:

Հանձնաժողովն իր նիստում, սահմանված կարգով, վիճակահանությամբ որոշում է հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաշխումը:

Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վիճակահանությանը չեն մասնակցում:

Հանձնաժողովի նախագահը կազմակերպում և վերահսկում է քվեարկության անցկացումը, անհրաժեշտության դեպքում օժանդակում գործառույթ իրականացնող անդամներին, փոխարինում նրանց և մասնագետին ժամանակավոր բացակայության դեպքում:

Հանձնաժողովի քարտուղարը՝ Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, գրառումներ է կատարում գրանցամատյանում, օժանդակում գործառույթ իրականացնող անդամներին, փոխարինում նրանց և մասնագետին ժամանակավոր բացակայության դեպքում:

Վիճակահանությունների արդյունքները գրառվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Ամբողջ աշխատանքը բաժանվում է 6 հերթափոխի՝ յուրաքանչյուրը 2 ժամ տևողությամբ՝



- 1) ժամը 8:00-10:00-ը,
- 2) ժամը 10:00-12:00-ը,
- 3) ժամը 12:00-14:00-ը,
- 4) ժամը 14:00-16:00-ը,
- 5) ժամը 16:00-18:00-ը,
- 6) ժամը 18:00-20:00-ը:

Հանձնաժողովի նախագահը վիճակահանությունների արդյունքներին համապատասխան ապահովում է հանձնաժողովի անդամների՝ 2 ժամը մեկ պարբերականությամբ հերթափոխը:

Մինչև տեղամասային կենտրոնի բացումը՝

տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկությանը ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ.

⇒ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ մասնագետը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով ստուգում է տեխնիկական սարքավորումների աշխատանքը, մուտքագրում է ընտրական տեղամասի նույնականացման տվյալները և տպում է տվյալ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանք:

👉 **Տեղեկանքը ստանձվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում**

⇒ Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը բացում է չիրկիզվող պահարանը, հանում է հանձնաժողովի անդամների անհատական կնիքները, ըստ անցկացված վիճակահանության՝ տրամադրում նրանց,

⇒ հանում է քվեաթերթիկները, քվեարկության ծրարները,

⇒ հանում է կնիքը և գրանցամատյանում կնիք դնելով՝ հայտարարում է կնիքի համարը,

⇒ ստուգում է քվեատուփի դատարկ լինելը, փակում և կնքում է քվեատուփը.

⇒ քվեաթերթիկները և քվեարկության ծրարները հարյուրական փաթեթով հատկացնում է քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող անդամներին.

⇒ հարյուր ինքնաստանձվող դրոշմանիշ հատկացվում է ինքնաստանձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին:

👉 Եթե միաժամանակ անցկացվում են համայնքի ղեկավարի և ավագանու անդամի քվեարկություններ, ապա յուրաքանչյուր ընտրության համար հատկացվում է հարյուրական ինքնաստանձվող դրոշմանիշ:

Վերոհիշյալ բոլոր գործողությունների մասին տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում կատարվում են համապատասխան գրառումներ:



Ժամը 8:00-ին ընտրական տեղամասը հայտարարվում է բացված և թույլատրում ընտրողների մուտքը քվեարկության սենյակ

Արգելվում է տեղամասային կենտրոն զենք, զինամթերքով մուտք գործելը:

Եթե քվեարկության սենյակում գտնվող ընտրողների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարվում է քվեարկության բնականոն ընթացքը, ապա տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին իրավունք ունի սահմանափակելու քվեարկության սենյակում միաժամանակ գտնվող ընտրողների թիվը, **բայց ոչ պակաս, քան 15 ընտրող՝ ընտրողներին քվեարկության սենյակ թողնելով հերթով՝ մեկ-մեկ:**

Քվեարկության կարգը

Ընտրողը քվեարկությանը մասնակցում է անձամբ. լիազորված քվեարկությունն արգելվում է:

1

Ընտրողների գրանցումը

Քվեարկությանը ներկայացած յուրաքանչյուր ընտրող պետք է գրանցվի: Առանց սահմանված կարգով գրանցվելու՝ ընտրողը չի կարող ստանալ քվեաթերթիկ և քվեարկել:

Յուրաքանչյուր ընտրող մոտենում է մասնագետին և ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթը.

Ընտրողի համար անձը հաստատող փաստաթուղթ են համարվում՝

- ✓ նույնականացման քարտը,
- ✓ կենսաչափական անձնագիրը,
- ✓ ոչ կենսաչափական անձնագիրը,
- ✓ անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը՝ տրված լիազոր մարմնի կողմից,

զինծառայողների համար՝

- ✓ զինվորական վկայականը կամ զինվորական գրքույկը, եթե գրանցվում են (քվեարկում են) զորամասի կազմված ընտրողների ցուցակում,

կալանքի տակ գտնվող և պարիժը կրող՝ ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների համար՝

- ✓ քրեակատարողական հիմնարկում գտնվող ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը,

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ քաղաքացիություն չունեցող ընտրողի անձը հաստատող փաստաթուղթ է համարվում՝

- ✓ օտարերկրյա քաղաքացիների համար՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հավաստող ժամանակավոր կացության քարտը, մշտական կացության քարտը, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիրը.
- ✓ քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայականը, ժամանակավոր կացության քարտը, մշտական կացության քարտը, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիրը.
- ✓ փախստական ճանաչված անձանց համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը.


- ✓ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիությունը հավաստող անձնագիրը՝ տվյալ համայնքի բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ նշումով:



Ընտրողի անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետի ավարտը հիմք է ընտրողին քվեարկության չթողնելու համար, բացառությամբ այն դեպքի, երբ տեխնիկական սարքավորումում առկա տեղեկություններից պարզվում է, որ ընտրողն ունի այլ՝ վավերականության ժամկետը չլրացած, անձը հաստատող փաստաթուղթ:



Եթե ընտրողը ներկայացրել է




Եթե ընտրողը ներկայացրել է **այլ անձի անձը հաստատող փաստաթուղթ**, ապա մասնագետն այդ մասին տեղեկացնում է հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովի նախագահը նման դեպքում քվեարկության սենյակ է հրավիրում ոստիկանության ծառայողներին, որոնք ձեռնարկում են օրենքով սահմանված միջոցներ:





Եթե ընտրողը **գրանցված է** տվյալ տեղամասի ընտրողների ցուցակում և որպես անձը հաստատող փաստաթուղթ **ներկայացրել է**.



Այն դեպքում, երբ էկրանին հայտնվում է կանաչ նշան,

- I. ընտրողը ներմուծում է իր աջ ձեռքի ցուցամատի մատնահետքը: Դրա անհնարինության դեպքում մատնահետքը ներմուծվում է հետևյալ առաջնայնությամբ՝ ծախս ձեռքի ցուցամատը, աջ ձեռքի միջնամատը, ծախս ձեռքի միջնամատը, աջ ձեռքի մատնեմատը, ծախս ձեռքի մատնեմատը, աջ ձեռքի ճկույթը, ծախս ձեռքի ճկույթը, աջ ձեռքի բթամատը, ծախս ձեռքի բթամատը:



Մատնահետքը ներմուծելու անհնարինության դեպքում մատնահետք ներմուծման քայլը բաց է թողնվում:

- II. Դրանից հետո տեխնիկական սարքավորումը տպում է ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը, ազգանունը, անունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, քվեարկության կտրոնի հերթական համարը, իսկ թվային շտեմարանում առկա լինելու դեպքում՝ նաև ընտրողի լուսանկարը պարունակող քվեարկության կտրոն:



- III. Մասնագետը տպված քվեարկության կտրոնը ընտրողի անձը հաստատող փաստաթղթի հետ վերադարձնում է ընտրողին, որից հետո ընտրողը մոտենում է ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի համապատասխան անդամին:

- IV. Ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողից վերցնում է քվեարկության կտրոնը, ընտրողների ցուցակում գտնում է ընտրողի տողը և իր անհատական կնիքն է դնում համապատասխան սյունակում, որից հետո անհատական կնիքով կնքում քվեարկության կտրոնը և այն փոխանցում ընտրողին:



Եթե ընտրողը **գրանցված չէ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում, ապա էկրանին հայտնվում է դեղին նշան**, իսկ եթե տեխնիկական սարքավորման մեջ առկա է համապատասխան տեղեկատվություն, ապա նաև այն ընտրական տեղամասի համարը, որի ցուցակում է ընդգրկված այդ ընտրողը: Սույն մասում նշված դեպքում ընտրողը դուրս է հրավիրվում քվեարկության սենյակից:



դեղին նշան



Եթե ընտրողն **իր անձը հաստատող որևէ փաստաթղթով արդեն իսկ մասնակցել է քվեարկությանը, էկրանին հայտնվում է կարմիր նշան**, ապա մասնագետը տեղեկացնում է հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովի նախագահը նման դեպքում քվեարկության սենյակ է հրավիրում ոստիկանության ծառայողներին, որոնք ձեռնարկում են օրենքով սահմանված միջոցներ:



կարմիր նշան



Ուշադրություն

Ջորամասում
հաշվառված
ընտրողների
ցուցակով
քվեարկության
դեպքում

Քվեարկության օրը
կազմվող՝
ընտրողների
լրացուցիչ ցուցակով
քվեարկության
դեպքում

Ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի համապատասխան անդամ

- ✓ ստուգում է ընտրողի ինքնությունը.
- ✓ ընտրողների ցուցակում գտնում է ընտրողի տվյալները (քվեարկության օրը կազմվող՝ ընտրողների լրացուցիչ ցուցակով քվեարկելու դեպքում լրացնում է ընտրողի անունը, հայրանունը, ազգանունը).
- ✓ լրացնում ընտրողի անձը հաստատող փաստաթղթի համարը.
- ✓ ընտրողն ստորագրում է իր անվան դիմաց.
- ✓ հանձնաժողովի անդամը դնում է իր անհատական կնիքը ստորագրության դիմաց.

մասնագետի կողմից տեխնիկական սարքավորման մեջ ներմուծվում է, թե որ ցուցակի ընտրող է, ընտրողի համարը համապատասխան ցուցակում, որից հետո ընտրողը ներմուծում է իր մատնահետքը: Այդ գործողություններից հետո տեխնիկական սարքավորումը տպում է քվեարկության կտրոն, որը պարունակում է, թե որ ցուցակի ընտրող է, ընտրողի համարը համապատասխան ցուցակում և քվեարկության կտրոնի հերթական համարը: Մասնագետը կտրոնը փոխանցում է ընտրողին

Ընտրողների գրանցումն առանց տեխնիկական սարքավորման կիրառման իրականացվում է.




քրեակատարողական հիմնարկում քվեարկություն.



շրջիկ արկղով քվեարկություն.



տեխնիկական սարքավորման խափանման կամ չլինելու պարագայում՝ քվեարկություն:



Եթե ընտրողը չի կարող ինքնուրույն ստորագրել ընտրողների ցուցակում, ապա նա իրավունք ունի դիմելու այլ քաղաքացու օգնության, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամների:

Ընտրողների ցուցակում տեղ գտած տառասխալը կամ թվային սխալը, մնացած տվյալների համապատասխանության դեպքում, հիմք չեն ընտրողին քվեարկելուց զրկելու համար:


Քվեարկության կտրոնն ստանալուց անմիջապես հետո ընտրողը մոտենում է հանձնաժողովի՝ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու անդամին և ներկայացնում քվեարկության կտրոնը:

 Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի համար տպագրվում են միևնույն չափերի **առանձին քվեաթերթիկներ**:

Քվեաթերթիկի առաջին էջում նշվում են ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը, կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին տրված համարը, ինչպես նաև համապետական ընտրական ցուցակի առաջին երեք թեկնածուների ազգանունները, անունները և հայրանունները:

Քվեաթերթիկի երկրորդ էջում նշվում են ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի համապատասխան տարածքային ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների ազգանունները, անունները և հայրանունները՝ ազգանունների այբբենական հերթականությամբ: Թեկնածուների անունների աջ կողմում նախատեսվում են դատարկ քառանկյուններ՝ ընտրողի կողմից նշում կատարելու համար:

Քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու հանձնաժողովի անդամն ընտրողին տրամադրում է ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մեկական քվեաթերթիկ և քվեարկության մեկ ծրար: **Ընտրողը չի կարող հրաժարվել բոլոր քվեաթերթիկներն ստանալուց:**



Ընտրողն անցնում է քվեարկության խցիկ՝ քվեարկելու:

! **Ընտրողը քվեաթերթիկը լրացնում է գաղտնի՝ քվեարկության խցիկում: Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկում:**

- ✓ Ընտրողն ընտրություններին մասնակցող կուսակցություններից, կուսակցությունների դաշինքներից որևէ մեկին **ընտրում է այդ կուսակցության քվեաթերթիկը քվեարկության ծրարի մեջ դնելու միջոցով:**
- ✓ **Տարածքային ընտրական ցուցակի թեկնածուներից որևէ մեկին ընտրելու դեպքում** ընտրողն իր ընտրած **քվեաթերթիկի երկրորդ էջում V ձևի նշում է կատարում այն թեկնածուի անվան դիմացի քառանկյունում**, որին կողմ է քվեարկում:
 - ✎ *Եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել կամ վնասել է, ապա կարող է դիմել հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար:*
 - ✎ *Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ընտրողին հափկացվում է յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի մեկական քվեաթերթիկ: Սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկը անհապաղ մարվում է:*

- ✓ Քվեաթերթիկն առանց ծալելու դնում է քվեարկության ծրարի մեջ:



- ✓ Չօգտագործված քվեաթերթիկները գցվում են քվեարկության խցիկում տեղադրված առանձին տուփի մեջ:



**Քվեաթերթիկ և քվեարկության ծրար ստանալը
Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների,
ինչպես նաև համայնքի ղեկավարի և ավագանու անդամի
ընտրությունների ժամանակ**

- Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների ընտրությունների քվեաթերթիկի ձախ կողմում նշվում են կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների անվանումները՝ ըստ այբբենական հերթականության, և ընտրական ցուցակի առաջին երեք թեկնածուների ազգանունները, անունները և հայրանունները, իսկ աջ կողմում նախատեսվում են դատարկ քառանկյուններ՝ ընտրողի կողմից նշում կատարելու համար:
- Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների քվեաթերթիկի ձախ կողմում նշվում են թեկնածուների ազգանունը, անունը, հայրանունը՝ այբբենական հերթականությամբ, առաջադրող կուսակցության անվանումը, ինքնաառաջադրման դեպքում՝ «ինքնաառաջադրում» բառը, իսկ աջ կողմում նախատեսվում են դատարկ քառանկյուններ՝ ընտրողի կողմից նշում կատարելու համար:

Քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու հանձնաժողովի անդամն ընտրողին է տրամադրում **մեկ քվեաթերթիկ և քվեարկության մեկ ծրար**: Միաժամանակ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրության քվեարկություն անցկացվելու դեպքում՝ քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ:

Ընտրողն անցնում է քվեարկության խցիկ՝ քվեարկելու:

- ✓ Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների ընտրությունների ժամանակ ընտրողը **V** ձևի նշում է կատարում այն կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվան դիմացի քառանկյունում, որին կողմ է քվեարկում:
- ✓ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ ընտրողը **V** ձևի նշում է կատարում այն թեկնածուի անվան դիմացի քառանկյունում, որին կողմ է քվեարկում:
- ✓ մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում ընտրողը, եթե կողմ է քվեարկելու, **V** ձևի նշում է կատարում «կողմ եմ» բառերի, եթե դեմ՝ «դեմ եմ» բառերի դիմաց:



Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ, դիտորդ, զանգվածային լրավորության միջոցի ներկայացուցիչ, այցելու:



Անձն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն մեկ ընտրողի:



Բացի նշված դեպքից, քվեաթերթիկը լրացնելիս քվեարկության խցիկում այլ անձի ներկայությունն արգելվում է:

➡ Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնող անձի տվյալները գրառվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

➡ Եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել կամ վնասել է, ապա կարող է դիմել հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար:

➡ Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ընտրողին հապկացվում է նոր քվեաթերթիկ: Սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկը անհապաղ մարվում է:

✓ Ընտրողը քվեաթերթիկը տեղավորում է քվեարկության ծրարում:

➡ Միաժամանակ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրության քվեարկություն անցկացվելու դեպքում ընտրողը յուրաքանչյուր քվեաթերթիկ տեղավորում է համապատասխան ծրարում:



Քվեարկելուց անմիջապես հետո ընտրողը՝

➡ մոտենում է քվեատուփի մոտ ինքնաստանձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին


➡ նրան է հանձնում քվեարկության կտրոնը:

Ինքնաստանձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամը.

✓ ստուգում է կտրոնը, իր նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի այլ անդամի կամ վստահված անձի պահանջով կարող է ստուգել նաև ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը.

✓ առանց քվեարկության ծրարն ընտրողից վերցնելու քվեարկության ծրարի կտրվածքի միջով քվեաթերթիկին է փակցնում ինքնաստանձվող դրոշմանիշը.

✓ բացում է քվեատուփի ճեղքը և ընտրողին հնարավորություն է ընձեռում քվեարկության ծրարը գցելու քվեատուփի մեջ:



Եթե ընտրողը չի ներկայացնում քվեարկության կտրոն, ապա ինքնաստանձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամը տեղեկացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, որն ընտրողից վերցնում է քվեարկության ծրարը, անհապաղ մարում է՝ առանց ծրարի պարունակությունն ստուգելու:



Ընտրողն իրավունք չունի տեղամասային կենտրոնում հայտարարելու, թե ինչպես է քվեարկել:

Քվեարկելուց հետո ընտրողն անհապաղ պետք է դուրս գա քվեարկության սենյակից:

Քվեարկության ընթացքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը՝

- ⇒ մինչև **ժամը 11.30-ը, 14.30-ը, 17.30-ը և 20.30-ը** տարածքային ընտրական հանձնաժողով հաղորդում է համապատասխանաբար մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը.
- ⇒ պահպանում է կարգ ու կանոնը տեղամասային կենտրոնում և ապահովում է քվեարկության գաղտնիությունը.
- ⇒ կարգավորում է ընտրողների հոսքը տեղամասային կենտրոն.
- ⇒ վիճակահանությունների արդյունքներին համապատասխան ապահովում է հանձնաժողովի անդամների՝ 2 ժամը մեկ պարբերականությամբ հերթափոխը.
- ⇒ ըստ անհրաժեշտության քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ է տրամադրում հանձնաժողովի՝ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու անդամին.
- ⇒ ինքնասուսնավող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին հատկացնում է ինքնասուսնավող դրոշմանիշեր, եթե քվեարկության ընթացքում ինքնասուսնավող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին հատկացված ինքնասուսնավող դրոշմանիշերը սպառվել են.
 նոր ինքնասուսնավող դրոշմանիշերի հերթական խմբաքանակն է հանձնում ինքնասուսնավող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամից քվեարկության կտրոնները ստանալուց հետո.
- ⇒ հաշվում է ինքնասուսնավող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամից ստացած քվեարկության կտրոնները, և թիվը արձանագրում է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:



Տեղամասային կենտրոնի փակումը

Քվեարկության օրը՝ ժամը 20:00 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեարկության ավարտի մասին և

- ✓ արգելում է ընտրողների մուտքը քվեարկության սենյակ.
- ✓ քվեարկության սենյակում գտնվող ընտրողներին քվեարկելու հնարավորություն է տալիս.
- ✓ փակում է քվեատուփի ճեղքը:

Քվեարկության արդյունքների ամփոփումը _____

Քվեարկության արդյունքների ամփոփումը կատարվում է հենց քվեարկության սենյակում:

Քվեարկության արդյունքների ամփոփումն սկսվում է անմիջապես քվեարկության ավարտից հետո և ընթանում առանց ընդհատման մինչև քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրության կազմումը:

Քվեարկության արդյունքների ամփոփման փուլում անհրաժեշտ է խստորեն պահպանել ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված գործողությունների հաջորդականությունը.

1. փաթեթավորում է հանձնաժողովի անդամների անհատական կնիքները, փաթեթը կնքվում և տեղադրվում է պարկում.

2. հաշվվում է քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը ըստ ընտրողների ցուցակում առկա ստորագրությունների:

Առկայության դեպքում **առանձին հաշվվում է նաև՝**

- քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակում առկա ստորագրությունների թիվը,
- շրջիկ արկղով քվեարկությանը մասնակցած ընտրողների լրացուցիչ ցուցակներում առկա ստորագրությունների թիվը:

3. Այդ թվերը հրապարակվում և արձանագրվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

4. Հանձնաժողովի նախագահը գրանցամատյանում արձանագրված՝ ընտրական տեղամասում քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը կապի հնարավոր միջոցներով անհապաղ հայտնում է տարածքային ընտրական հանձնաժողով.

5. Եթե տեխնիկական սարքավորումն անխափան աշխատել է քվեարկության ընթացքում, ապա **տեխնիկական սարքավորման միջոցով տպվում է տեղեկանք**, որում նշվում է տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների հերթական համարը համապատասխան ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում:

Ուշադրություն



Տեղեկանքը տպելու անհնարինության դեպքում այդ մասին համապատասխան գրառում է կատարվում գրանցամատյանում:

6. հաշվվում է ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորման միջոցով տպված քվեարկության կտրոնները, փաթեթավորում, փաթեթները կնքում և տեղադրում է պարկում.

7. հաշվվում է ընտրողներից ստացված համարակալված քվեարկության կտրոնները, փաթեթավորում, փաթեթները կնքում և տեղադրում է պարկում.

8. հաշվվում է չօգտագործված ինքնաստանձվող դրոշմանիշերը, փաթեթավորում, փաթեթը կնքում և տեղադրում է պարկում.

9. հաշվվում է չօգտագործված համարակալված քվեարկության կտրոնները, փաթեթավորում, փաթեթը կնքում և տեղադրում է պարկում:



համարակալված քվեարկության կտրոնները չօգտագործվելու դեպքում դրանք չեն հաշվվում, և նշվում է տարածքային ընտրական հանձնաժողովի հատկացրած կտրոնների թիվը.

10. առանց հաշվելու փաթեթավորվում է չօգտագործված քվեաթերթիկները և սահմանված կարգով ներկայացնում տարածքային ընտրական հանձնաժողով:

Այդ գործողությունների արդյունքները հրապարակվում են և արձանագրվում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

⇒ Միաժամանակ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների դեպքում առաջին հերթին ամփոփվում են **համայնքի ավագանու ընտրության քվեարկության արդյունքները**:



Քվեաթերթիկների տեսակավորումն _____

- ⇒ Հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը.
- ⇒ քվեատուփից հանում քվեարկության մեկ ծրար.
- ⇒ ցուցադրում այնպես, որ այն տեսանելի լինի ներկաների համար.
- ⇒ քվեարկության ծրարից հանում է քվեաթերթիկը.

! Ուշադրություն

- ! Քվեարկության ծրարի մեջ մեկից ավելի քվեաթերթիկներ գտնվելու դեպքում հաշվարկում ընդգրկվում է **միայն սահմանված նմուշի քվեաթերթիկը**, այսինքն՝ հաստատված նմուշի քվեաթերթիկը, **որի վրա փակցված է այդ ընտրական տեղամասի ինքնաստանձվող դրոշմանիշը**:
- ! Ավելորդ գրառում պարունակող քվեարկության ծրարի դեպքում **քվեաթերթիկը ծրարից չի հանվում**, քվեարկության ծրարը դրանում գտնվող քվեաթերթիկի հետ անհապաղ մարվում է:

Քվեաթերթիկների տեսակավորումը **Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ**

- ⇒ Հանձնաժողովի նախագահը.
- ✍ հայտարարում է քվեաթերթիկի սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին,
- ✍ վավեր կամ անվավեր լինելու մասին (**այս փուլում տարածքային ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի մասով քվեաթերթիկի վավերականության գնահատում չի իրականացվում**),



! Ուշադրություն

Ազգային ժողովի ընտրությունների դեպքում սահմանված նմուշի քվեաթերթիկն **անվավեր է, եթե ներառում է ավելորդ գրառում**:


- ✍ **վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում է** կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը, որի օգտին է քվեաթերթիկը.
- ✍ **քվեաթերթիկը ցուցադրվում է** այնպես, որ տեսանելի լինի ներկաների համար:
- ✍ պահանջի դեպքում քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին:
- ✍ հանձնաժողովի նախագահի հայտարարությանը համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն:
- ✍ առարկության դեպքում քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը,

✎ առարկության ընդունման մասին որոշմանը համապատասխան, իսկ առարկությունը չընդունվելու կամ առարկություն չլինելու դեպքում՝ հանձնաժողովի նախագահի հայտարարության համաձայն, քվեաթերթիկը դրվում է համապատասխան կուսակցության, կուսակցությունների դաշինքի օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ:

Այս գործողությունը կրկնվում է քվեատուփում առկա բոլոր ծրարների համար:

⇒ յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի օգտին քվեարկված քվեաթերթիկները և անվավեր քվեաթերթիկները տեսակավորվում են առանձին-առանձին:

⇒ Քվեաթերթիկներն ըստ կուսակցության, կուսակցությունների դաշինքի օգտին քվեարկված քվեաթերթիկների տեսակավորելուց և հաշվարկելուց հետո ստացված թվերը բարձրաձայն հայտարարվում և գրանցվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:



⇒ յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի վավեր քվեաթերթիկները տեսակավորելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովը (ըստ առավել թվով կողմ քվեարկված քվեաթերթիկների ստացած կուսակցությունների) հաշվարկում է կուսակցության տարածքային ընտրական ցուցակում ընդգրկված յուրաքանչյուր թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը: **Այդ նպատակով.**

✎ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, քվեաթերթիկի երկրորդ էջում կատարված նշումի համաձայն, հայտարարում է, թե կուսակցության տարածքային ընտրական ցուցակի որ թեկնածուի օգտին է քվեարկված:

Ուշադրություն

Եթե քվեաթերթիկը երկրորդ էջում ներառում է՝



- մեկից ավելի թեկնածուների օգտին նշումներ
- որևէ նշում չի ներառում
- ակնհայտ խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու սահմանված V ձևը,

ապա քվեաթերթիկը մնում է միայն կուսակցության, կուսակցությունների դաշինքի օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթում:

✎ Քվեաթերթիկը ցուցադրվում է այնպես, որ տեսանելի լինի ներկաների համար: Պահանջի դեպքում քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին: Հանձնաժողովի նախագահի հայտարարությանը համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն: Առարկության դեպքում քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը, և առարկության ընդունման մասին որոշմանը համապատասխան, իսկ առարկությունը չընդունվելու կամ առարկություն չլինելու դեպքում՝ հանձնաժողովի նախագահի հայտարարության համաձայն, քվեաթերթիկը դրվում է համապատասխան պատգամավորի թեկնածուի օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ:

Այս գործողությունը կրկնվում է յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի օգտին քվեարկած բոլոր քվեաթերթիկների համար:

Նշված կարգով յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի քվեաթերթիկները տեսակավորելուց հետո հաշվարկվում է այդ կուսակցության

տարածքային ընտրական ցուցակի յուրաքանչյուր թեկնածուի օգտին քվեարկված քվեաթերթիկների թիվը, բարձրաձայն հայտարարվում և գրանցվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների քվեաթերթիկները տեսակավորելուց հետո յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի կողմ քվեարկված քվեաթերթիկները փաթեթավորվում են միասին:

Քվեաթերթիկների տեսակավորումը Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների, ինչպես նաև համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ

⇒ Հանձնաժողովի նախագահը.

- ✚ Հայտարարում է քվեաթերթիկի վավեր, անվավեր կամ չսահմանված նմուշի լինելու մասին
- ✚ վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում է նաև, թե, որ կուսակցության, կուսակցությունների դաշինքի օգտին է քվեարկված
- ✚ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ, վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում է նաև, թե, որ թեկնածուի օգտին է քվեարկված
- ✚ քվեաթերթիկը ցուցադրվում է այնպես, որ տեսանելի լինի ներկաների համար
- ✚ պահանջի դեպքում քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին
- ✚ Հանձնաժողովի նախագահի հայտարարությանը համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն
- ✚ առարկության դեպքում քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը
- ✚ առարկության ընդունման մասին որոշմանը համապատասխան, իսկ առարկությունը չընդունվելու կամ առարկություն չլինելու դեպքում՝ հանձնաժողովի նախագահի հայտարարության համաձայն, քվեաթերթիկը դրվում է կուսակցության, կուսակցությունների դաշինքի կամ թեկնածուի օգտին քվեարկված քվեաթերթիկների փաթեթի մեջ
- ✚ մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ:



Այդ գործողությունը կրկնվում է քվեատուփում առկա բոլոր ծրարների համար:

Ուշադրություն

Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների դեպքում սահմանված նմուշի **քվեաթերթիկն անվավեր է, եթե՝**



- ✓ մեկից ավելի թեկնածուի, կուսակցության օգտին նշումներ է ներառում.
- ✓ մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում միաժամանակ «կողմ եմ» և «դեմ եմ» բառերի դիմաց նշումներ է ներառում.
- ✓ բացի քվեարկության համար սահմանված V ձևի կամ դրան նմանվող նշանից, ներառում է ավելորդ գրառում.
- ✓ որևէ նշում չի ներառում.
- ✓ ակնհայտ խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու սահմանված V ձևը:

⇒ Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների ընտրության ժամանակ յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի օգտին քվեարկված քվեաթերթիկները և անվավեր քվեաթերթիկները տեսակավորվում են առանձին-առանձին:



- ⇒ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր թեկնածուների օգտին քվեարկված քվեաթերթիկները և անվավեր քվեաթերթիկները տեսակավորվում են առանձին-առանձին.
- ⇒ քվեարկված քվեաթերթիկները տեսակավորելուց և հաշվարկելուց հետո ստացված թվերը բարձրաձայն հայտարարվում և գրանցվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Ուշադրություն



- ! Քվեաթերթիկների տեսակավորումն իրականացնելու ժամանակ հանձնաժողովի անդամներին արգելվում է նշումներ կատարել, ինչպես նաև իրենց մոտ ունենալ գրիչներ, մատիտներ կամ նշումներ կատարելու այլ առարկաներ:
- ! Արդյունքներն ամփոփելիս չսահմանված նմուշի քվեաթերթիկները հաշվի չեն առնվում և չեն հաշվարկվում:
- ! Հաշվարկված և տեսակավորված քվեաթերթիկները սահմանված կարգով փաթեթավորվում են, իսկ փաթեթները կնքվում և տեղադրվում են պարկում:
- ! Փաթեթների վրա պետք է առկա լինի հանձնաժողովի նախագահի ստորագրությունը:
- ! Հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք ևս իրավունք ունեն ստորագրելու փաթեթների վրա:
- ! Ընտրական փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում պետք է փակվի:
- ! Տեղամասային ընտրական հանձնաժողովում այդ պարկը սահմանված կարգով փակելու համար պատասխանատու է հանձնաժողովի նախագահը
- ! Պարկի վրա պետք է առկա լինի հանձնաժողովի նախագահի ստորագրությունը:
- ! Հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք ևս իրավունք ունեն ստորագրելու պարկի վրա:
- ! Գրանցամատյանում գրառվում են փաթեթների և պարկի վրա ստորագրողների անուն-ազգանունները, դրվում ստորագրության նմուշները:

ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Արձանագրության կազմումը հանձնաժողովը պետք է ավարտի քվեարկության ավարտից ժամ հետո:



Արձանագրությունը կազմվում է 4 օրինակից.

- ✓ 1 օրինակը փակցվում է տեղամասային կենտրոնում՝ ընտրողների ցուցակների կողքին.
- ✓ 1 օրինակը տեղադրվում է ընտրական  փաստաթղթերի պարկում.
- ✓ 2 օրինակը ներկայացվում են տարածքային ընտրական հանձնաժողով.

Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները, կնքում է հանձնաժողովի նախագահը:

Հանձնաժողովի անդամը պարտավոր է ստորագրել արձանագրությունը: Եթե նա արձանագրության տվյալների վերաբերյալ ունի առարկություն (հափուկ կարծիք), ապա այդ մասին գրառում է կատարում արձանագրությունում՝ դրա համար նախատեսված հափուկ տեղում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք կարող են լուսանկարել կամ տեսանկարահանել ընտրական տեղամասում կազմված քվեարկության արդյունքների արձանագրությունը:



Քվեարկության ավարտից հետո ոչ ուշ, քան 14 ժամվա ընթացքում տարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացվում.



- ☐ ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը.
- ☐ չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը.
- ☐ չօգտագործված քվեաթերթիկները.
- ☐ քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակը.
- ☐ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը.
- ☐ տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը.
- ☐ տեխնիկական սարքավորումը.
- ☐ քվեատուփը /քվեատուփերը, Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ նաև շրջիկ արկղը/.
- ☐ քվեարկության խցիկները:

Ընտրական փաստաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը տարածքային ընտրական հանձնաժողով են տեղափոխում ոստիկանության ծառայողների ուղեկցությամբ:

Ընտրական փաստաթղթերն տարածքային ընտրական հանձնաժողովում հանձնվում և ընդունվում են հանձնողի ու ընդունողի կողմից ստորագրելու և ստացական տալու միջոցով:

ՈՒ Շ Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն



- ⇒ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը,
- ⇒ քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակը,
- ⇒ տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը,
- ⇒ չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը,
- ⇒ չօգտագործված քվեաթերթիկները,

տարածքային ընտրական հանձնաժողով են տեղափոխվում առանց մեկանգամյա օգտագործման պարկում տեղադրելու:

Դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, վստահված անձինք, այցելուները քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո կարող են իրենց միջոցներով ուղեկցել ընտրական փաստաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովից տարածքային ընտրական հանձնաժողով տեղափոխող մեքենան:

**Տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը
(անգործությունը) կարող է բողոքարկել՝**

- 🗳 յուրաքանչյուր ոք, ով գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ սույն օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը.
- 🗳 վստահված անձը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.
- 🗳 դիտորդը կամ այցելուն, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.
- 🗳 զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.
- 🗳 ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդ կուսակցության կամ կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը:
- 🗳

Տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները, ներկայացվում են համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով՝

- **2 օրվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին. բողոքները ներկայացվում են՝**
 - ! **աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-ից մինչև 18.00-ն.**
 - ! **կամ քվեարկության նախորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև 19.00-ն**
- **Քվեարկության օրվա ընթացքում կամ քվեարկության հաջորդ օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները ներկայացվում են՝**
 - ! **քվեարկության օրը ժամը 8.00-ից մինչև ժամը 22.00-ն.**
 - ! **կամ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն.**
 - ! **կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:**

Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, եթե արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին՝ **իրավունք ունի ներկայացնելու.**

- ✓ **ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում:**
 - Դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով՝**
 - ! **քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն**
 - ! **կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:**
- ✓ **ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում:** Վերահաշվարկի դիմումը պետք է ներառի դիմողի անունը, ազգանունը,

դիմողի հասցեն և այն ընտրական տեղամասի համարը, որում պահանջվում է կատարել վերահաշվարկ, ինչպես նաև այն քվեարկության արդյունքները (եթե միաժամանակ կայացել է մի քանի քվեարկություն), որոնց վերաբերյալ պահանջվում է վերահաշվարկ անցկացնել: Դիմումին կարող են կցվել քվեարկության արդյունքների սխալ ամփոփման ապացույցներ: Վերահաշվարկի դիմումը պետք է ստորագրված լինի դիմումատուի կողմից:

Վերահաշվարկի դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով՝

- ! **քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն,**
- ! **կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:**

- ✓ Եթե միաժամանակ կայացել է մի քանի քվեարկություն, ապա տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը վերահաշվարկի դիմում կարող է ներկայացնել միայն այն քվեարկության արդյունքի վերաբերյալ, որի արձանագրությունում կատարել է հատուկ կարծիք ունենալու մասին գրառում:
- ✓ Միաժամանակ մեկից ավելի քվեարկություններ անցկացվելու դեպքում յուրաքանչյուր քվեարկության արդյունքների վերահաշվարկի համար ներկայացվում է առանձին դիմում:
- ✓ Տարածքային ընտրական հանձնաժողովը մերժում է ընտրական տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմումը և վերահաշվարկ չի իրականացնում, եթե պահանջվել է քվեարկության արդյունքների վերահաշվարկի իրականացում ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի դրույթների խախտումով:

Ընտրական հանձնաժողովներ ներկայացված դիմումը պետք է.

- ! ստորագրված լինի դիմողի կողմից,
- ! ներառի դիմողի անունը, ազգանունը,
- ! դիմողի հասցեն,
- ! տրման ամսաթիվը,
- ! կարող է ներառել նաև դիմողի հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն
- ! դիմումում պետք է սահմանված լինի դիմողի պահանջը,
- ! բերված լինեն դիմողի հիմնավորումները,
- ! հնարավոր ապացույցները պետք է կցված լինեն դիմումին,

Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր:

Ընտրական հանձնաժողովի անդամի կողմից ներկայացված դիմումին կից պետք է ներկայացվի հանձնաժողովի անդամի սահմանված նմուշի վկայականի պատճենը:

Դիմողը դիմումը հասցեագրում է այն ընտրական հանձնաժողովին, որի իրավասության սահմաններում է բարձրացված հարցի լուծումը: Եթե դիմում տալու համար ընտրական օրենսգրքով նախատեսված է վերջնաժամկետ, ապա դիմումը համարվում է պատշաճ ժամկետում ներկայացված, եթե այն մինչև վերջնաժամկետը մուտքագրվել է համապատասխան ընտրական հանձնաժողով:

Ոչ իրավասու ընտրական հանձնաժողով ներկայացված դիմումները կամ վերջնաժամկետից ուշ ներկայացված դիմումները չեն քննարկվում և գրությամբ վերադարձվում են դիմումատուին՝ նշելով պատճառը:

Ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) վերադաս ընտրական հանձնաժողով բողոքարկելու դեպքում բողոք ներկայացնող կողմը կրում է իր ներկայացրած փաստական հանգամանքների ապացուցման բեռը: Սահմանված կանոնները վերաբերում են նաև ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումներին:

**ՏԵՂԱՄԱՍՍՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ**

Տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպելու գործում անհրաժեշտ է ոչ միայն իրազեկ լինել ոլորտը կարգավորող իրավահարաբերություններին, այլև կարևոր է տիրապետել այնպիսի հմտությունների, որոնք արդյունավետ կդարձնեն Հանձնաժողովի աշխատանքները ճիշտ կազմակերպելու համար:

***Տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպելու
գործում ուշադրության կենտրոնում պետք է լինեն.***

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ(ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ) ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ (ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ)

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ - ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կազմակերպչական կամ ճիշտ կառավարելու (մենեջմենթի) հմտությունների իմացությունն անկախ մեր ոլորտից մեզ օգնում է ճիշտ ժամանակին կողմնորոշվելու, որոշումներ ընդունելու, սպասվող փոփոխությունների կանխատեսման և գործընթացների կառավարման գործում: Մեր օրերում կարելի է փաստել, որ ինչպես առօրյայում, այնպես էլ գործնականում, մենք կամա, թե՛ ակամա կիրառում ենք մենեջմենթ, իսկ այն ճիշտ կիրառելու և արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է տիրապետել կառավարման այնպիսի հմտությունների, որոնք թույլ կտան հարթ և արդյունավետ ճանապարհով ուղղորդել իրավիճակային փոփոխությունները:

Անցանկալի օրինակներ տեղամասային կենտրոնում հանդիպած դեպքերից.

Իրավիճակ 1

Տեղամասային կենտրոնում կազմակերպչական հրահանգներ է տալիս դիտորդը, իսկ հանձնաժողովի նախագահը և քարտուղարը չեն կարողանում պահպանել կարգ ու կանոն տեղամասային կենտրոնում, վստահված անձինք անընդհատ միջամտում են:

Իրավիճակ 2

ՏՀՀ նախագահն իրեն է վերապահում որոշումներ կայացնելու և ղեկավարելու դերակատարումը՝ անհավասար պայմաններ ստեղծելով հանձնաժողովի անդամների միջև, կայացնում է միանձնյա որոշումներ և թելադրում իր կանոնները:

Ինչպե՞ս խուսափել նմանատիպ ոչ ցանկալի իրավիճակներից



Առաջին հայացքից, ամեն ինչ պարզ է, սակայն Հանձնաժողովի ղեկավար կազմը, պետք է ունենա կազմակերպչական հմտություններ, որպեսզի կարողանա աշխատանքները կազմակերպել արդյունավետ:

Արդյունավետ կառավարման սկզբունքները

- ✓ Հեղինակությունն (authority) առաջին որակն է, որ մարդ պետք է ունենա: Խոսքը պետք է վստահություն ներշնչի
- ✓ Արդարություն և խստություն
- ✓ Հաղորդակցություն և արագ կողմնորոշվելու կարողություն
- ✓ Լիազորությունների վերահսկողություն:

Ինչպե՞ս կառավարել գործընթացը

Կառավարումն ունի երկու հիմնական տիպ

⇒ Ձևական՝ պաշտոնական դիրքի վրա հիմնված:

Մեթոդներ՝ լիազորությունների իրացում, նյութական խրախուսում, հնարավոր պատժի կիրառում



⇒ Ոչ ձևական՝ հեղինակության և փոխադարձ հարգանքի վրա հիմնված:

Մեթոդներ՝ համագործակցություն, ընդհանուր հետաքրքրությունների բավարարում, խմբի անդամ լինելու մոտիվացիա:

Ինչպիսի՞ հատկություններ պետք է ունենա ղեկավարը

⇒ Կողմնորոշվելու

⇒ Համագործակցելու


⇒ Որոշումներ կայացնելու



Առաջնորդել, ղեկավարել, թե՞ համագործակցել

Յուրաքանչյուր իրավիճակ ենթադրում է իր պատասխանը.

Կառավարումն անընդհատ կրկնվող գործընթաց է, որն ունի հետևյալ փուլերը, գիտական ձևակերպմամբ՝ կառավարման ֆունկցիաները



ԿՈՆՖԼԻԿՏԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄ)

Ինչ է կոնֆլիկտը

Կոնֆլիկտը տարբեր կողմերում գտնվող սուբյեկտների հակադիր ուղղված նպատակների, շահերի, դիրքորոշումների, կարծիքների, հայացքների բախումն է:

Կոնֆլիկտի տեսակները

Ըստ ուղղվածության կոնֆլիկտները բաժանվում են՝

- ⇒ Անհավասար և հավասար կողմերի
- ⇒ Ղեկավարի և ենթակայի
- ⇒ Ներանձնային և Միջանձնային

Գնալ բախման, թե՞ կառավարել կոնֆլիկտը

Այս հարցի պատասխանը ստանալու համար դիտարկենք Բերտրանտ Ռասելի կողմից առաջարկվող <<Chicken Run >> (<< Հավիկի վազք>>) օրինակը:

Օրինակը բերված է ժամանակին ամերիկացի երիտասարդների մոտ տարածում գտած հայտնի խաղի օրինակով, երբ ավտոմեքենաները մեծ արագությամբ գալիս են ընդառաջ և ով առաջինը թեքի ուղղությունը՝ նա համարվում է <<Chicken >> (<< Հավիկ>>):

<<Հավիկի վազք>>

Բերտրանտ Ռասել

	2. Վարել	3. Թեքվել
1 Թեքվել /մի կողմի վրա	1.3	1.1
1. Վարել	 0.0	3.1

Եթե դիմացինը զիջի դու կստանաս առավելագույնը՝ 3 միավոր, իսկ եթե դու զիջես առաջինը, ապա դիմացինը կստանա առավելագույնը՝ 3 միավոր: Եթե կողմերը գնան բախման, ապա ոչ ոք միավոր չի ստանա:

Գլխավոր միտքը հետևյալն է.

Եթե կոնֆլիկտը կառավարենք և գանք համաձայնության, ապա յուրաքանչյուրը կստանա մեկական միավոր:

Իսկ ինչպե՞ս կառավարել կոնֆլիկտը

Կոնֆլիկտների հաղթահարման համար շեշտադրումը պետք է դնել կողմերի հետաքրքրությունների վրա, այն է՝ երկու կողմերի դիրքորոշումները հակասական են. սակայն եթե դիտարկենք խնդիրը նրանց հետաքրքրությունների շրջանակներում, ապա մեկին հետաքրքրում է բաժակը, մյուսին՝ ջուրը:

Օրինակ՝ Ռոջեր Ֆիշերի <<Ինչպե՞ս հասնել Այո-ի>> գրքից

Երկու քույր վիճում են նարնջի համար: Մայրը լսելով նրանց վեճը, վերցնում է նարինջը, կիսում այն երկու հավասար մասերի և ամեն մեկին տալիս իր բաժինը: Առաջին հայացքից սա ամենաարդար և ճիշտ լուծումն է: Սակայն հետո պարզվում է, որ քույրերից մեկը, ստանալով իր կես նարինջը, առանձնացնում է այն կեղևից, կեղևը նետում աղբարկղը, իսկ նարնջից հյուսթ քամում:



Մյուս քույրը, ստանալով իր կեսը, առանձնացնում է կեղևը նարնջից, նարինջը նետում է աղբարկղը, իսկ կեղևը կտրատում է շատ մանր կտորների և լցնում թխվածքաբլիթի համար պատրաստված խմորի մեջ:

Ի՞նչ ունենք արդյունքում՝ կես նարինջ աղբամանում և երկու քույրերի կիսով չափ բավարարված ցանկություն:

Ի՞նչ կարող էինք ունենալ՝ քույրերի հետաքրքրությունների ամբողջական բավարարում և նարնջի առավելագույն օգտագործում:

Անվանենք այս ցանկալի տարբերակը՝ <<առանց կորուստների լուծում>>:

< <Առանց կորուստների լուծում>> գտնելու համար, ի՞նչ պետք է աներ քույրերի մայրը՝ Հարցեր տար քույրերի հետաքրքրությունների մասին, հասկանար, թե նարինջն ունենալու արդյունքում ինչպե՞ս են պատրաստվում այն օգտագործել:

Անշուշտ կողմերի հետաքրքրությունները ոչ բոլոր օրինակներում են թույլ տալիս գտնելու առանց կորուստների ճանապարհը, սակայն գրեթե միշտ հնարավոր է գտնել նվազագույն կորուստներով ճանապարհ:

Ինչպե՞ս վարվել նվազագույն կորուստներով ճանապարհ գտնելու համար.

Նարինջի օրինակում անհրաժեշտ էր լսել դիմացինի հետաքրքրության շրջանակը, բայց օրինակները կարող են տարբեր լինել.

Օրինակ՝ «Այսբերգ»

Ի՞նչ եք տեսնում



Սառցաբեկորի ո՞ր մասն եք տեսնում

Ի՞նչ եք հիմա տեսնում



Ամբողջ ՄԱՌՑԱԲԵԿՈՐԸ


Սառցաբեկորի մեծ մասը՝ (90%-ը) ջրի տակ է թաքցրած: Եթե մենք փորձենք սառցաբեկորի չափսերի մասին և ընդհանրապես նրա բնութագրիչների մասին կարծիք կազմել միայն մեզ երևացող հատվածը տեսնելով, ապա ակնհայտորեն կսխալվենք:

Հաճախ խնդիրները նման են Սառցաբեկորի օրինակին

Ի՞նչ անել խնդրի ծավալի կամ բնութագրիչների մասին մեր պատկերացումներում չսխալվելու համար:

Ուսումնասիրել խնդրի խորությունը և գտնել առաջին հայացքից մեզ անտեսանելի հատվածները:

Ինչպես սառցաբեկորի դեպքում, այնպես էլ իրական կյանքում, այն, ինչը կա ջրի մակերևույթից ներքև, կարող է լինել ավելի կարևոր և գորեղ, քան այն, ինչը տեսանելի է առաջին հայացքից:



Կա՞ն արդյոք կանոններ, որոնք կիրառելուց կարելի է առավել արդյունավետ դարձնել հաղորդակցությունն ու բանակցությունը:

Այո՛, կան: Նշենք դրանցից մի քանիսը.

- Լսել դիմացինին, հնարավորություն տալ արտահայտվելու
- Դիմացինի հակակրանքը կամ ագրեսիան թուլացնող քայլեր ձեռնարկել
- Զերծ մնալ բացասական գնահատականներ տալուց
- Ներկայացնել սպասվելիք արդյունքը և խնդիրը
- Հեռու մնալ վարկաբեկող քայլերից, հնարավորություն տալ, որ դիմացինը գա հանգուցալուծման
- Գնահատել արարքները, այլ ոչ թե՝ դիմացինին
- Դրսևորել հանգիստ և վստահ պահվածք, որը հավասարը-հավասարի ազդեցություն է թողնում
- Զխուսափել ներողություն հայցելուց և շնորհակալություն հայտնելուց: Դա զինաթափում է դիմացինին, հարգանք է առաջացնում և վստահություն ներշնչում

Տեղամասային կենտրոններում անհամաձայնությունների պատճառները և ներգրավված կողմերը կարող են լինել տարբեր՝ ՏՀՀ անդամներ, դիտորդներ, վստահված անձինք, ընտրողներ, լրագրողներ, թեկնածուներ:

⇒ Մարդիկ իրենց բնույթով տարբեր են և դա արտահայտվում է, թե՛ գաղափարական, և թե՛ գործնական տարբեր հարթություններում, իրենց մոտեցումների և հետաքրքրությունների դեպքում: Տեղամասային կենտրոնում առաջ քաշած հարցերը հաճախ ունենում են տարբեր հետաքրքրություններ, ուստի անհամաձայնություններն ու կոնֆլիկտային իրավիճակները միշտ առկա են: Անհամաձայնությունները, շատ հնարավոր է ունենան նաև դրական ազդեցություն՝ խթանելով զարգացումը՝ նոր լուծում գտնելու անհրաժեշտությամբ:

⇒ Անհամաձայնությունները, երբ կողմերը պատրաստ են ողջամտորեն քննարկելու միմյանց տեսակետները, ոչ թե կարող են, այլ միանշանակ հանգուցալուծվում են երկու կողմերին ձեռնտու լուծմամբ և նորանոր գիտելիքների ձեռքբերմամբ:

*«Տարակարծությունը զարգացման պատճառն է» - հին իմաստություն
Չպետք է խուսափել տարակարծությունից, տարակարծությունը դեռ բախում չէ:*

«ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐՈՎ ՃԱՆԱՊԱՐՀԸ» գտնելու համար կարող ենք զարգացնել մեր ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Ինչ է բանակցությունը

Բանակցությունը երկխոսություն է երկու կամ ավելի անձանց միջև:

Բանակցության նախապատրաստվելիս օգտակար մտորում

⇒ Ինչ եմ ես ուզում

Սպասելիք

⇒ Ինչ է դիմացինը ուզում

Կանխատեսելիություն

⇒ Ինչ արդյունքի կհասնեմ
Կարևոր սկզբունքներ

Ինչպե՞ս բանակցել

Կարևոր սկզբունքներ

- Կառուցել աշխատանքային հարաբերություններ՝ հաղորդակցություն (բանակցություն տանող առաջին քայլն է, իսկ դրա բացակայությունը կամ վատ հաղորդակցությունը՝ խնդրի լուծման ձախողում)
- Լսել հասկանալու համար (հասկանալու համար պետք է նաև դիմացինի օգնությունը, հասկանալ չի նշանակում համաձայնել, իսկ չհասկանալը՝ բանակցության բացակայություն է)
- Առանձնացնել խնդիրը անձից
- Բացատրել ձեր մոտեցումները (հետաքրքրությունները), ցույց տալով դրանց կենսական կարևորությունը
- Փորձել լինել դիմացինի տեղում
- Վստահություն (այն չի կարող արդյունք լինել, սակայն կարող է տանել արդյունքի)
- Կառավարել հուզական դրսևորումները (բարձր գոռալ՝ դեռ չի նշանակում ճիշտ լինել)
- Խելամիտ լուծման հասնելու համար անհրաժեշտ է հաշտեցնել շահերը, այլ ոչ թե դիրքերը (հաճախ կողմերը նույն միտքն ու շահերն են արտահայտում, բայց իրար չլսելու պատճառով խնդրի լուծում չի գտնվում)
- Տեսնել խնդրի բոլոր կողմերը


Ինչ կարող է տալ մեզ բանակցությունը

Հասնել փոխըմբռման, վերացնել տարաձայնությունները, համատեղ գործողությունների արդյունքում գալ ընդհանուր հայտարարի, թեթևացնել մթնոլորտը, հեշտացնել աշխատանքը, ձևավորել հարգանքի և վստահության մթնոլորտ:


Հայտնի են բանակցությունների երկու տեսակ

	<i>Դիրքային բանակցություն</i>	<i>Ուղղորդված բանակցություն</i>
<i>Հիմնված է</i>	Անձի հոգեբանական «ես»-ի վրա	«Դիվանագիտության» վրա
<i>Ակնկալիք</i>	Սեփական անձի համար լավագույն լուծումը ստանալը	Փոխադարձ համաձայնության ձեռքբերում
<i>Լուծման տեսկանությունը</i>	Մեկանգամյա	Երկարատև
<i>Մոտիվացիա</i>	Սեփական շահ	Բոլոր կողմերի շահերը
<i>Մեթոդներ</i>	Անձնական մոտեցում	Տարբեր տարբերակների դիտարկում, առավելագույն ջանքերի ներդնում
<i>Արդյունք</i>	Սեփական ցանկությունների բավարարում	Կողմերի հետաքրքրությունների բավարարում

Ճիշտ տեղեկատվության հասանելիության կարևորությունը



Բանակցային հմտությունների կառուցվածքը



Արդյունավետ բանակցության համար կարևոր նախապայման է՝ **Վստահությունը**:

Վստահության բաղադրիչները՝

➤ Հուսալիություն

Մենք վստահում ենք ինչ-որ մեկին, երբ նրա վրա կարող ենք հույս դնել՝ հատկապես երբ մենք խոցելի ենք:

➤ Փոխադարձություն

Մենք սպասում ենք, որ դիմացինը հակված է պատասխանել նույն կերպ:

➤ Կանխատեսելիություն


Կանխատեսելիությունը նվազեցնում է անորոշությունը և ընդլայնում վստահությունը, անկանխատեսելիությունը մեծացնում է անվստահությունը:



Առկա է վստահությունը	Բացակայում է վստահությունը
Կողմերը միմյանց հավատում են	Կողմերը չեն հավատում միմյանց
Կողմերը լսում են միմյանց	Կողմերը չեն լսում միմյանց

Փորձում են պահպանել ունեցած վստահությունը, հարաբերությունները	Բացակայում է հարաբերությունների կորստի վտանգը
Կողմերը կարող են պայմանավորվել	Դժվար է պայմանավորվել

Բանակցություններն ու հարաբերությունների բարելավումն անընդհատ գործընթաց է, այն կրկնվող ցիկլ է մեր կյանքում և կազմակերպչական գործընթացներում:



ՀԱՐՑԱՇԱՐ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ

Հարց 1. Ընտրական հանձնաժողովի որոշումը ե՞րբ է համարվում ընդունված՝ Պատասխան. եթե կողմ են քվեարկել նիստին ներկա հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի

Հարց 2. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրողների ցուցակի օրինակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցնում է՝ Պատասխան. քվեարկության օրվանից 2 օր առաջ

Հարց 3. Հերթական ընտրությունների դեպքում ե՞րբ է կազմավորվում տեղամասային ընտրական հանձնաժողովը՝ Պատասխան. քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն

Հարց 4. Ե՞րբ է իրականացվում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաշխումը և ի՞նչպես՝ Պատասխան. քվեարկության օրը ժամը 7:00-ին՝ վիճակահանությամբ

Հարց 5. Քանի՞ անդամ ունի տեղամասային ընտրական հանձնաժողովը՝ Պատասխան. առնվազն 7 անդամ

Հարց 6. Ե՞րբ է հրավիրվում տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին նիստը՝ Պատասխան. հանձնաժողովի կազմավորման օրվանից հետո՝ 3-րդ օրը՝ ժամը 12:00-ին:

Հարց 7. Ընտրական հանձնաժողովի նիստը ե՞րբ է համարվում իրավագոր՝ Պատասխան. եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների կեսից ավելին

Հարց 8. Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները կարող են ընդգրկվել իրենց ընտրական տեղամասի՝ ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում՝ Պատասխան. միայն Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ

Հարց 9. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներին ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակներում ընդգրկելու մասին դիմումը լիազոր մարմին կարող է ներկայացվել՝ Պատասխան. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն

Հարց 10. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները կարող են ընդգրկվել իրենց ընտրական տեղամասի՝ ըստ գտնվելու վայրի ընտրողների ցուցակում՝

Պատասխան. նաև նրանց նշանակող կուսակցության կամ տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի դիմումի հիման վրա

Հարց 11. Նշվածներից ո՞րն է տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորություն՝

Պատասխան. կազմակերպում է ընտրությունների և հանրաքվեների քվեարկությունը, ամփոփում քվեարկության արդյունքներն ընտրական տեղամասում

Հարց 12. Ովքե՞ր են նշանակում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին՝

Պատասխան. Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները և համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովը

Հարց 13. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը նշվածներից ո՞ր վիճակահանությանը չեն մասնակցում՝

Պատասխան. հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաշխման

Հարց 14. Հանձնաժողովի անդամը պարտավոր է ստորագրել՝

Պատասխան. քվեարկության արդյունքների արձանագրությունը

Հարց 15. Իրավունք ունի արդյո՞ք տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը սահմանափակելու քվեարկության սենյակում միաժամանակ գտնվող ընտրողների թիվը՝

Պատասխան. այո, եթե քվեարկության սենյակում գտնվող ընտրողների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարվում է քվեարկության բնականոն ընթացքը

Հարց 16. Տեղամասային ընտրական հանձնաժողովում անցկացվող վիճակահանությունների արդյունքները՝

Պատասխան. գրառվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում

Հարց 17. Ո՞րտեղ են փակցվում ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակները՝

Պատասխան. քվեարկության սենյակում կամ դրա մուտքի մոտ

Հարց 18. Տեղամասային կենտրոնում ինչպե՞ս են տեղադրվում քվեարկության խցիկները՝

Պատասխան. միմյանցից առնվազն 1 մետր հեռավորությամբ և այն դիրքով, որ ընտրողը քվեարկելիս լինի հանձնաժողովին դեմքով և թիկունքով դեպի պատը

Հարց 19. Արտահերթ ընտրությունների դեպքում ե՞րբ է կազմավորվում տեղամասային ընտրական հանձնաժողովը՝

Պատասխան. քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 20, և ոչ ուշ, քան 18 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն

Հարց 20. Ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում նաև քվեարկության սենյակում կարող են ներկա գտնվել՝

Պատասխան. յուրաքանչյուր միջազգային կազմակերպությունից մինչև 2 դիտորդ՝ թարգմանչի ուղեկցությամբ

Հարց 21. Ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում նաև քվեարկության սենյակում կարող են ներկա գտնվել՝

Պատասխան. յուրաքանչյուր տեղական դիտորդական կազմակերպությունից 1 դիտորդ

Հարց 22. Ընտրական հանձնաժողովի անդամներից և քվեարկողներից բացի, ովքե՞ր կարող են ներկա գտնվել քվեարկության սենյակում՝

Պատասխան. վստահված անձինք, դիտորդները, այցելուները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներն ու վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները

Հարց 23. Վստահված անձինք, դիտորդները, այցելուները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները՝

Պատասխան. կարող են լուսանկարել, տեսանկարահանել քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը

Հարց 24. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ ընտրական հանձնաժողովի նիստին և քվեարկության ընթացքում քվեարկության սենյակում կարող են ներկա գտնվել՝

Պատասխան. յուրաքանչյուր թեկնածուի մեկ վստահված անձ

Հարց 25. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրական հանձնաժողովի նիստին և քվեարկության ընթացքում քվեարկության սենյակում կարող է ներկա գտնվել ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի՝

Պատասխան. մինչև երկու վստահված անձ

Հարց 26. Եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա՝

Պատասխան. իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականը արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում

Հարց 27. Եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը, գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել Ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա՝

Պատասխան. իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում

Հարց 28. Ազգային ժողովի, Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուները՝

Պատասխան. չեն կարող ունենալ վստահված անձ

Հարց 29. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկության արդյունքների արձանագրությունը ովքե՞ր կարող են լուսանկարել կամ տեսանկարահանել՝

Պատասխան. քվեարկության արդյունքների ամփոփման նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք

Հարց 30. Դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, այցելուն իրավունք ունի՝

Պատասխան. ներկա գտնվելու ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում.

Հարց 31. Դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, այցելուն իրավունք չունի՝

Պատասխան. խաթարելու ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը

Հարց 32. Վստահված անձն իրավունք ունի՝

Պատասխան. խորհրդակցական ծայնի իրավունքով մասնակցելու հանձնաժողովի նիստերին,

Հարց 33. Վստահված անձն իրավունք ունի՝

Պատասխան. բողոքարկելու ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները, անգործությունը.

Հարց 34. Ընտրողը քվեարկությանը մասնակցում է՝

Պատասխան. անձամբ

Հարց 35. Ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամը վերցնում է քվեարկության կտրոնը և կատարում հետևյալ բոլոր գործողությունները՝

Պատասխան. ընտրողների ցուցակում գտնում է ընտրողի տողը, ընտրողը ստորագրում է համապատասխան սյունակում, հաջորդ սյունակում հանձնաժողովի անդամը դնում է իր անհատական կնիքը, որից հետո անհատական կնիքով կնքում քվեարկության կտրոնը և այն փոխանցում ընտրողին

Հարց 36. Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովը տարածքային ընտրական հանձնաժողովին հաղորդում է՝
Պատասխան. ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը

Հարց 37. Ընտրողի անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետի ավարտը՝
Պատասխան. հիմք չէ նրան քվեարկության չթողնելու համար, բացառությամբ այն դեպքի, երբ տեխնիկական սարքավորումում առկա տեղեկություններից պարզվում է, որ ընտրողն ունի այլ՝ վավերականության ժամկետը չլրացած, անձը հաստատող փաստաթուղթ

Հարց 38. Եթե հանձնաժողովի պատասխանատու անդամին հատկացված ինքնասուսնծվող դրոշմանիշերը սպառվել են, ապա՝
Պատասխան. տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը նրան նոր ինքնասուսնծվող դրոշմանիշեր է հանձնում նրանից քվեարկության կտրոնները ստանալուց հետո

Հարց 39. Մինչև ինքնասուսնծվող դրոշմանիշը քվեաթերթիկին փակցնելը, հանձնաժողովի անդամը ընտրողից պետք է ստանա՝
Պատասխան. քվեարկության կտրոնը

Հարց 40. Ի՞նչ կարգով է փակցվում ինքնասուսնծվող դրոշմանիշը՝
Պատասխան. հանձնաժողովի անդամն առանց քվեարկության ծրարը ընտրողից վերցնելու քվեարկության ծրարի կտրվածքի միջով ինքնասուսնծվող դրոշմանիշը փակցնում է քվեաթերթիկին

Հարց 41. Ընտրողի համար անձը հաստատող փաստաթուղթ է համարվում՝
Պատասխան. նույնականացման քարտը

Հարց 42. Ընտրողի համար անձը հաստատող փաստաթուղթ է համարվում՝
Պատասխան. կենսաչափական անձնագիրը

Հարց 43. Ընտրողի համար անձը հաստատող փաստաթուղթ է համարվում՝
Պատասխան. ոչ կենսաչափական անձնագիրը

Հարց 44. Մինչև քվեարկության սկսվելը տեխնիկական սարքավորման միջոցով տպված տեղեկանքը՝
Պատասխան. սուսնծվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում

Հարց 45. Ո՞ր դեպքում է էկրանին հայտնվում կարմիր նշան՝
Պատասխան. եթե ընտրողն իր անձը հաստատող որևէ փաստաթղթով արդեն իսկ մասնակցել է քվեարկությանը

Հարց 46. Ո՞ր դեպքում է էկրանին հայտնվում դեղին նշան՝
Պատասխան. եթե ընտրողը գրանցված չէ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների
ցուցակում

Հարց 47. Ընտրողի գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողների
ցուցակի համապատասխան սյունակում և քվեարկության կտրոնի վրա դնում է՝
Պատասխան. իր անհատական կնիքը

Հարց 48. Ընտրողը քվեաթերթիկը լրացնում է կամ քվեաթերթիկներից մեկն ընտրում
է՝
Պատասխան. գաղտնի՝ քվեարկության խցիկում

Հարց 49. Քվեարկությունը սկսվելուց առաջ մասնագետը տեխնիկական
սարքավորման միջոցով տպում է՝
Պատասխան. տվյալ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների
բացակայությունը հավաստող տեղեկանք

Հարց 50. Ընտրողի կողմից կատարած քվեարկության մասին որևէ ձևով տեղեկանալը՝
Պատասխան. արգելվում է

Հարց 51. Ինքնաստանձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար
պատասխանատու անդամը քվեարկության ծրարը քվեատուփի մեջ գցելու
հնարավորություն է ընձեռում միայն՝
Պատասխան. քվեաթերթիկի վրա ինքնաստանձվող դրոշմանիշը փակցնելուց հետո

Հարց 52. Եթե քվեարկության սենյակում գտնվող դիտորդների, զանգվածային
լրատվության միջոցների ներկայացուցիչների թիվն այնքան է, որ ակնհայտորեն
խաթարում է քվեարկության բնականոն ընթացքը, ապա տեղամասային ընտրական
հանձնաժողովը՝
Պատասխան. իրավասու է իր որոշմամբ սահմանելու քվեարկության սենյակում
միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային
լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը

Հարց 53. Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին
օգնող անձի տվյալները՝
Պատասխան. գրառվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի
գրանցամատյանում

Հարց 54. Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողն
իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության
խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի՝
Պատասխան. ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ, դիտորդ, այցելու,
զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ

Հարց 55. Եթե ընտրողը չի ներկայացնում քվեարկության կտրոն, ապա՝
Պատասխան. հանձնաժողովի անդամը տեղեկացնում է տեղամասային
հանձնաժողովի նախագահին, որն ընտրողից վերցնում է քվեարկության ծրարը,
անհապաղ մարում է՝ առանց պարունակությունը ստուգելու

Հարց 56. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը կամ վերջինիս
հանձնարարությամբ հանձնաժողովի քարտուղարը Ե՞րբ են բացում շրջիկ արկղը՝
Պատասխան. ոչ ուշ, քան մինչև ժամը 20:00-ն

Հարց 57. Ե՞րբ է ընտրողների գրանցումն իրականացվում առանց տեխնիկական
սարքավորման կիրառման՝
Պատասխան. շրջիկ արկղով քվեարկության դեպքում

Հարց 58. Ե՞րբ է ընտրողների գրանցումն իրականացվում առանց տեխնիկական
սարքավորման կիրառման՝
Պատասխան. տեխնիկական սարքավորման խափանման կամ չլինելու
պարագայում

Հարց 59. Ե՞րբ է ընտրողների գրանցումն իրականացվում առանց տեխնիկական
սարքավորման կիրառման՝
Պատասխան. քրեակատարողական հիմնարկում

Հարց 60. Միևնույն անձը քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն
չունեցող քանի՞ ընտրողի կարող է օգնել՝
Պատասխան. միայն մեկ

Հարց 61. Ե՞րբ է անցկացվում շրջիկ արկղով քվեարկությունը՝
Պատասխան. քվեարկության օրը՝ ժամը 8:00-ից հետո, բայց այն հաշվարկով, որ
քվեարկությունն ավարտվի մինչև ժամը 18:00-ն

Հարց 62. Շրջիկ արկղով քվեարկությունը կազմակերպվում է՝
Պատասխան. ստացիոնար բուժման մեջ գտնվող, քվեարկության օրը տեղամասային
կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող անձանց համար

Հարց 63. Շրջիկ արկղով քվեարկությունը կազմակերպվում է՝
Պատասխան. ձերբակալված անձանց պահելու վայրում քվեարկության օրը գտնվող
ընտրողների համար

Հարց 64. Ընտրողին ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկելու համար հիմք
համարվող փաստաթղթերը՝
Պատասխան. կցվում են քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմվող
ընտրողների լրացուցիչ ցուցակին

Հարց 65. Ո՞ր դեպքում է հանձնաժողովի անդամը լրացնում համարակալված կտրոնը՝ Պատասխան. քրեակատարողական հիմնարկում քվեարկության ժամանակ

Հարց 66. Ո՞ր դեպքում է հանձնաժողովի անդամը լրացնում համարակալված կտրոնը՝ Պատասխան. շրջիկ արկղով քվեարկության ժամանակ

Հարց 67. Ո՞ր դեպքում է հանձնաժողովի անդամը լրացնում համարակալված կտրոնը՝ Պատասխան. տեխնիկական սարքավորման խափանման կամ չլինելու պարագայում քվեարկության ժամանակ

Հարց 68. Մասնագետի ժամանակավոր բացակայության դեպքում, ո՞վ կարող է նրան փոխարինել՝ Պատասխան. հանձնաժողովի նախագահը, կամ նրա հանձնարարությամբ հանձնաժողովի քարտուղարը կամ այլ անդամ

Հարց 69. Եթե ընտրողը ներկայացրել է այլ անձի անձը հաստատող փաստաթուղթ, ապա՝ Պատասխան. մասնագետն այդ մասին տեղեկացնում է հանձնաժողովի նախագահին, ով քվեարկության սենյակ է հրավիրում ոստիկանության ծառայողներին, որոնք ձեռնարկում են օրենքով սահմանված միջոցներ

Հարց 70. Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմած ընտրողների լրացուցիչ ցուցակի յուրաքանչյուր էջ ստորագրվում և կնքվում է՝ Պատասխան. տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից

Հարց 71. Ընտրողի գործողությունները քվեաթերթիկը սխալ լրացնելու կամ վնասելու դեպքում՝ Պատասխան. դիմում է հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ (ԱԺ ընտրության ժամանակ՝ յուրաքանչյուր կուսակցության մեկական քվեաթերթիկ) ստանալու համար

Հարց 72. Ընտրական հանձնաժողովի անդամի գործողություններն ընտրողի կողմից քվեաթերթիկը սխալ լրացնելու կամ վնասելու դեպքում՝ Պատասխան. հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ընտրողին հատկացնում է նոր քվեաթերթիկ, սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկը (քվեաթերթիկները) անհապաղ մարվում են

Հարց 73. Տեխնիկական սարքավորման մեջ չեն ներբեռնվում՝ Պատասխան. ստացիոնար բուժման մեջ գտնվող ընտրողների լրացուցիչ ցուցակները

Հարց 74. Ձորամասում հաշվառված ընտրողների ցուցակները տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից բացվում են միայն՝ Պատասխան. քվեարկության օրը, այն պահին, երբ ընտրական տեղամաս են այցելում զորամասի ցուցակում ընդգրկված ընտրողները

Հարց 75. Զինծառայողները քվեարկում են՝
Պատասխան. տեղամասային կենտրոնում

Հարց 76. Քվեաթերթիկի վավեր (անվավեր) լինելու վերաբերյալ առարկության
դեպքում քվեարկության է դրվում՝
Պատասխան. հանձնաժողովի անդամի առաջարկությունը

Հարց 77. Քվեարկության արդյունքներն ամփոփելիս չսահմանված նմուշի
քվեաթերթիկները՝
Պատասխան. հաշվի չեն առնվում և չեն հաշվարկվում

Հարց 78. Միաժամանակ համայնքի ղեկավարի և ավագանու ընտրությունների
դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովն առաջին հերթին ամփոփում է՝
Պատասխան. համայնքի ավագանու ընտրության քվեարկության արդյունքները

Հարց 79. Ի՞նչ հաջորդականությամբ է հաշվարկվում կուսակցության տարածքային
ցուցակում ընդգրկված թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների
թիվը(Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ)՝
Պատասխան. ըստ առավել կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած
կուսակցությունների

Հարց 80. Քվեարկության արդյունքներն ամփոփելիս ի՞նչ գործողություն է կատարում
տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության ծրարի վրա ավելորդ
գրառում լինելու դեպքում՝
Պատասխան. քվեաթերթիկը ծրարից չի հանվում, քվեարկության ծրարը դրանում
գտնվող քվեաթերթիկի հետ անհապաղ մարվում է

Հարց 81. Նշվածներից ի՞նչն է դրվում մեկանգամյա օգտագործման պարկի մեջ՝
Պատասխան. հաշվարկված և տեսակավորված քվեաթերթիկները

Հարց 82. Նշվածներից ի՞նչն է դրվում մեկանգամյա օգտագործման պարկի մեջ՝
Պատասխան. հանձնաժողովի անդամների անհատական կնիքները

Հարց 83. Նշվածներից ի՞նչն է դրվում մեկանգամյա օգտագործման պարկի մեջ՝
Պատասխան. քվեարկության արդյունքների արձանագրության մեկ օրինակը

Հարց 84. Ընտրական հանձնաժողովի գործողությունները քվեարկության ծրարի մեջ
մեկից ավելի քվեաթերթիկներ հայտնաբերելու դեպքում՝
Պատասխան. հաշվարկում ընդգրկվում է միայն ինքնասուսնձվող դրոշմանիշով
քվեաթերթիկը

Հարց 85. Ընտրական տեղամասում ընտրողների ընդհանուր թիվը հավասար է՝

Պատասխան. լրացուցիչ ցուցակների ընտրողների և ընտրողների ցուցակում ընդգրկված ընտրողների թվերի գումարին

Հարց 86. Տեղամասային ընտրական հանձնաժողովում մեկանգամյա օգտագործման պարկը սահմանված կարգով փակելու համար պատասխանատու է՝
Պատասխան. տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը

Հարց 87. Ազգային ժողովի ընտրությունների դեպքում ո՞ր քվեաթերթիկն է անվավեր՝
Պատասխան. սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր է, եթե ներառում է ավելորդ գրառում

Հարց 88. Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների ընտրությունների դեպքում սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր է, եթե՝
Պատասխան. մեկից ավելի կուսակցության օգտին նշումներ է ներառում

Հարց 89. Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների ընտրությունների դեպքում սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր է՝
Պատասխան. եթե բացի քվեարկության համար սահմանված կամ դրան նմանվող նշանից ներառում է ավելորդ գրառում

Հարց 90. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների դեպքում սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր է, եթե՝
Պատասխան. որևէ նշում չի ներառում

Հարց 91. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների դեպքում սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր է, եթե՝
Պատասխան. մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում միաժամանակ «կողմ եմ» և «դեմ եմ» բառերի դիմաց նշումներ է ներառում.

Հարց 92. Ո՞ր քվեաթերթիկն է համարվում սահմանված նմուշի՝
Պատասխան. հաստատված նմուշի այն քվեաթերթիկը, որը հանվել է ծրարից, և որի վրա փակցված է այդ ընտրական տեղամասի ինքնաստանձվող դրոշմանիշը

Հարց 93. Տեղամասային ընտրական հանձնաժողովը նշվածներից ո՞ր գործողությունն է կատարում քվեարկության արդյունքների ամփոփման նիստում՝ ժամը 20:00-ից մինչև քվեատուփը բացելը՝
Պատասխան. հաշվում է չօգտագործված ինքնաստանձվող դրոշմանիշերը, փաթեթավորում, փաթեթը կնքում և տեղադրում է պարկում

Հարց 94. Նշվածներից ո՞ր գործողությունն է կատարվում քվեարկության արդյունքների ամփոփման նիստում՝ ժամը 20:00-ից մինչև քվեատուփը բացելը՝
Պատասխան. ըստ ընտրողների ցուցակում առկա ընտրողների ստորագրությունների հաշվում է քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը

Հարց 95. Նշվածներից ո՞ր գործողությունն է կատարվում քվեարկության արդյունքների ամփոփման նիստում՝ ժամը 20:00-ից մինչև քվեատուփը բացելը՝
Պատասխան. փաթեթավորվում են հանձնաժողովի անդամների անհատական կնիքները, փաթեթը կնքվում և տեղադրվում է ընտրական փաստաթղթերի պարկում

Հարց 96. Նշվածներից ո՞ր գործողությունն է կատարվում քվեարկության արդյունքների ամփոփման նիստում՝ ժամը 20:00-ից մինչև քվեատուփը բացելը՝
Պատասխան. առանց հաշվելու փաթեթավորվում են չօգտագործված քվեաթերթիկները

Հարց 97. Նշվածներից ո՞ր գործողությունն է կատարվում քվեարկության արդյունքների ամփոփման նիստում՝ ժամը 20:00-ից մինչև քվեատուփը բացելը՝
Պատասխան. առանձին-առանձին հաշվվում են ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորման միջոցով տպված և համարակալված քվեարկության կտրոնները

Հարց 98. Հանձնաժողովի նախագահից բացի, ովքե՞ր իրավունք ունեն ստորագրելու հաշվարկված և տեսակավորված քվեաթերթիկների փաթեթների վրա՝
Պատասխան. տեղամասային ընտրական հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք

Հարց 99. Նշվածներից ի՞նչն է առձեռն ներկայացվում տարածքային ընտրական հանձնաժողով՝
Պատասխան. չօգտագործված քվեաթերթիկները

Հարց 100. Նշվածներից ի՞նչն է առձեռն ներկայացվում տարածքային ընտրական հանձնաժողով՝
Պատասխան. հանձնաժողովի գրանցամատյանը և քվեարկության արդյունքների արձանագրության երկու օրինակը

Հարց 101. Նշվածներից ի՞նչն է առձեռն ներկայացվում տարածքային ընտրական հանձնաժողով՝
Պատասխան. հանձնաժողովի կնիքը

Հարց 102. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը պարկը, քվեարկության արդյունքների արձանագրության երկու օրինակը, գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը և տեխնիկական սարքավորումը քվեարկության ավարտից հետո՝
Պատասխան. ոչ ուշ, քան 14 ժամվա ընթացքում, ներկայացնում են տարածքային ընտրական հանձնաժողով

Հարց 103. Քվեարկության ավարտից հետո՝ մինչև ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություն կազմելը, տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը՝

Պատասխան. չի կարող ընդհատվել

Հարց 104. Քանի՞ օրինակից է կազմվում ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունը՝

Պատասխան. չորս օրինակից

Խնդիր. Ազգային ժողովի 2027 թվականի հունիսի 10-ի ընտրություններին Շիրակի մարզի Շիրակ համայնքում (55-րդ ընտրական տարածքի թիվ 55/1 ընտրական տեղամասում) շրջիկ արկղով քվեարկողների թիվը՝ **3** է, ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորմամբ տպված կտրոնների թիվը՝ **71**, ընտրողներից ստացված համարակալված կտրոնների թիվը՝ **2**, չօգտագործված համարակալված կտրոնների թիվը՝ **98**, չօգտագործված ինքնասուսնծվող դրոշմանիշների թիվը՝ **17**:

Ընտրողների ցուցակում մասնակիցների թիվը **70** է, քվեարկության օրը ընտրական տեղամասում կազմված ընտրողների լրացուցիչ ցուցակում՝ **1**, շրջիկ արկղով քվեարկողների ցուցակում՝ **2**:

Անվավեր քվեաթերթիկների թիվը **4** է, **A** կուսակցության օգտին քվեարկել է **22**, **B** կուսակցության օգտին՝ **16**, **C** կուսակցության օգտին՝ **31** ընտրող:

A կուսակցության տարածքային ցուցակում ընդգրկված **X** թեկնածուի օգտին քվեարկել է **12**, **Y** թեկնածուի օգտին քվեարկել է **10** ընտրող:

B կուսակցության տարածքային ցուցակում ընդգրկված **M** թեկնածուի օգտին քվեարկել է **12**, **N** թեկնածուի օգտին քվեարկել է **4** ընտրող:

C կուսակցության տարածքային ցուցակում ընդգրկված **K** թեկնածուի օգտին քվեարկել է **13**, **L** թեկնածուի օգտին քվեարկել է **18** ընտրող:

Արձանագրություն

_____ մարզ, _____ համայնք (Երևանի դեպքում վարչական շրջան)
թիվ _____ ընտրական տարածքի թիվ _____/_____ ընտրական տեղամասում ընտրության քվեարկության արդյունքների
Տեղամասային ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով տեղամասում քվեարկության արդյունքները, արձանագրում է

	Ընտրողների թիվը (Ը)	Մասնակիցների թիվը (Մ)
1. Ընտրողների ցուցակում ընդգրկված	90	70(յոթանասուն)
2 Քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմված ընտրողների լրացուցիչ ցուցակում	1(մեկ)	1(մեկ)
3 Շրջիկ արկղով քվեարկողների	3(երեք)	2(երկու)
4 Ընդհանուր թիվը 1-ին, 2-րդ, 3-րդ տողերի գումարը	94(իննսունչորս)	73(յոթանասուներեք)
5 Տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված ինքնասուսնծվող դրոշմանիշների թիվ	100	
6 Տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված համարակալված կտրոնների թիվը	100	
7 Ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորմամբ տպված կտրոնների թիվը	71(յոթանասունմեկ)	
8 Ընտրողներից ստացված համարակալված քվեարկության կտրոնների թիվը	2(երկու)	
9 Ընտրողներից ստացված կտրոնների ընդհանուր թիվը (հավասար է 7-րդ և 8-րդ տողերի թվերի գումարին)	73(յոթանասուներեք)	
10 Չօգտագործված համարակալված կտրոնների թիվը	98(իննսունութ)	
11 Չօգտագործված ինքնասուսնծվող դրոշմանիշների թիվը	17(տասնյոթ)	
12 Անվավեր քվեաթերթիկների թիվը	4(չորս)	
Կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	Կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը	
A	22(քսաներկու)	
B	16(տասնվեց)	
C	31(երեսունմեկ)	
	Կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը	
X	12(տասներկու)	
Y	10(տասը)	
B կուսակցության տարածքային ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների ազգանունը, անունը, հայրանունը	Կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը	
M	12(տասներկու)	
N	4(չորս)	
C կուսակցության տարածքային ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների ազգանունը, անունը, հայրանունը	Կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը	
K	13(տասներեք)	
L	18(տասնութ)	

Արձանագրությունում տվյալները լրացվում են թվերով և տառերով

Հարցաթերթիկը հանձնեց՝

Հարցաթերթիկն ընդունեց՝

հանձնողի անուն, ազգանուն	ստորագրություն
դասախոսի ազգանուն	ստորագրություն

Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացները կազմակերպում և անցկացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Դասընթացները կազմակերպվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախապես հրապարակված գրաֆիկին (օր, ժամ, վայր) համապատասխան: Անձը կարող է մասնակցել ստուգարքին՝ անկախ դասընթացին մասնակցելու հանգամանքից՝ հրապարակված գրաֆիկին համապատասխան: Որակավորման վկայականները տրվում են ստուգարքի հիման վրա:

Ստուգարքն անցկացվում է հայերեն լեզվով, համակարգչային կամ թեստային ստանդարտ եղանակով, թեստային եղանակի դեպքում՝ գրավոր:

Թեստը լրացնելու համար սահմանվում է մինչև 40 րոպե, որից հետո մասնակիցը թեստը հանձնում է դասընթացն անցկացնող դասախոսին: Ստուգարքը գնահատվում է առավելագույնը՝ 35 միավոր: Թեստի յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը 1 միավոր է, սխալ պատասխանը՝ զրո: Թեստերի մասով սխալ պատասխան է համարվում ոչ ճիշտ պատասխան նշելը, մեկից ավելի պատասխան նշելը, նշած պատասխանը փոխելը (ուղղելը), որևէ պատասխան չնշելը: Քվեարկության արդյունքների արձանագրություն կազմելու վերաբերյալ խնդրի լուծումը գնահատվում է առավելագույնը 5 միավոր:

Ստուգարքի հիման վրա՝

Ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորում շնորհվում և ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական տրվում է այն մասնակցին, որը հավաքել է առնվազն 31 միավոր:

Ստուգարքի արդյունքը 7-օրյա ժամկետում կարող է բողոքարկվել Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Ստուգարքի մասնակցել թույլատրվում է անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի առկայության դեպքում:

Դասընթացների, ստուգարքի ընթացքին կարող են հետևել զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Այսուհետ դիմումատուները կարող են հետևել, արդյոք ընդգրկված են 2019թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից կազմակերպված ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներին Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի Մասնագիտական դասընթացներ էջից կամ հետևելով հետևյալ հղմանը՝ <https://search.elections.am/>:

Դասընթացի և ստուգարքի հետ կապված հարցերի դեպքում կարող եք այցելել www.elections.am պաշտոնական կայք: Մանրամասները կներկայացվեն դասընթացի ժամանակ:

Մույն ձեռնարկը կազմվել է ՀՀ ընտրական օրենսգրքի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումների հիման վրա, սակայն այն չի կարող համարվել ՀՀ ընտրական օրենսգրքի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներին փոխարինող փաստաթուղթ:

www.elections.am
elearning.elections.am

